ՀՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի

նախագահ Տիգրան Մուկուչյանին

Դիմումատուներ/Բողոքաբերներ

«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ

«Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ

«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ

Ծանուցման հասցե՝

էլ փոստ europeinlaw@gmail.com

Հասցե ք. Երևան, Բյուզանդի 101, բն 4,

Հեռախոս 010 500665, 099 588576, 094 991334

11-ը դեկտեմբեր 2015թ.

Դիմում/Բողոք

2015թ. սահմանադրական հանրաքվեի վերահսկողությանը «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակում մասնակցել են հետևյալ կազմակերպությունները. Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ (ԹԻՀԿ), Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ (ԻԵՄ ՀԿ), Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ, «Լոգոս» ՀԿ, «Տարածաշրջանային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ, «Ընդդեմ իրավական կամայականությունների» ՀԿ, «Համայնքների համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ, «Լոռեցիների միավորում» ՀԿ, «Սոսե» ՀԿ, «Մարտունու կանանց խորհուրդ» ՀԿ, «Ժողովրդավար Արարատ» ՀԿ, Իջևանի ինֆոտուն, Կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ, Վանաձոր, «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ, «Սոցիոսկոպ» ՀԿ:

Վերոհիշյալ կազմակերպությունները հանրային հսկիչի իրենց կանոնադրական նպատակների և գործառույթների շրջանակներում իրականացրել են 06.12.2015թ. իրականացված հանրաքվեի նկատմամբ դիտորդական առաքելություն ընդհանուր առմամբ 1000-ից ավելի դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների միջոցով: Դիտորդություն է իրականացվել հանրաքվեի շուրջ 500 տեղամասերում:

Վերոնշյալ դիտորդական առաքելությունը համակարգելու նպատակով ստեղծվել էր միասնական համակարգման կենտրոն՝ դիտորդների և լրագրողների, ինչպես նաև

քաղաքացիների, և այլ սուբյեկտների կողմից քվեարկության գործընթացի ընթացքում դիտարկված և արձանագրված խախտումների վերաբերյալ հաղորդումները ընդունելու նպատակով: Համակարգող կենտրոնը ստացվող հաղորդումները հավաքագրում, վերլուծում և կազմում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան ընթացակարգերով դիմումներ և/կամ բողոքներ՝ ներկայացնելով ՀՀ պետական լիազոր մարմիններին՝ ՀՀ գործող Սահմանադրության 2-րդ և 4-րդ հոդվածների պահանջների ապահովմանը նպաստելու նպատակով:

Սույնով ներկայացնում ենք ներքոհիշյալ տեղամասերում «Քաղաքացի Դիտորդ» նախաձեռնության և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների՝ դիտորդների և լրագրողների դիտարկումները 06.12.2015թ. կայացած հանրաքվեի ընթացքում և հանրաքվեից հետո ընկած ժամանակահատվածում կատարված օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ և առաջարկում ենք դրանց հիման վրա վարույթներ հարուցել և արդյունավետ քննություն իրականացնել նշված խախտումների վերաբերյալ, ինչպես նաև գնահատել դրանց ազդեցությունը տվյալ ընտրատարածքներում հանրաքվեի արդյունքների վրա:

Այսպես.

Թիվ 1 ընտրատարածքում

1. Թիվ 1/17 տեղամասում դիտորդ Վահագն Դավթյանի կողմից պարբերաբար հայտնաբերվել է քվեարկողի անձնագրի տվյալների և ցուցակներում առկա անձի վերաբերյալ տվյալների անհամապատասխանություն: Այդ փաստն արձանագրելիս գրանցվել է նաև 15 ընտրողի միաժամանակյա ներկայություն տեղամասում:
2. Թիվ 1/23 տեղամասում դիտորդ՝ Դավթյան Ռոլանի կողմից գրանցվել է ավելի քան 15 ընտրողի միաժամանակյա ներկայություն ընտրատեղամասում: Հայտնաբերել է նաև ընտրողների ուղղորդում ինչպես տեղամասում, այնպես էլ՝ տեղամասից դուրս: Տեղամասում քվեարկության ընթացքում առկա են եղել նաև կողմնակի՝ վկայական չունեցող անձինք և միևնույն կազմակերպության մեկից ավելի ներկայացուցիչներ:
3. Թիվ 1/33 տեղամասում գրանցվել է ընտրատեղամասի սխալ կահավորում:

Թիվ 2 ընտրատարածքում

4. Թիվ 2/02 տեղամասում /թիվ 143 դպրոց, Բաղյան 5 հասցեով/ քվեարկողը ժամը 16:30-ի սահմաններում ներկայացել է տեղամաս և բացահայտել է, որ իր անվան դիմաց արդեն առկա է ստորագրություն: Հանձնաժողովի նախագահը փորձել է բացատրել, որ գուցե թյուրիմացություն է տեղի ունեցել և ցուցակում հաջորդը քվեարկել է նրա փոխարեն: Հանձնաժողովի անդամները միաբերան հաստատել են, որ թյուրիմացություն է եղել և ընտրողին թույլատրել են ստորագրել սխալ ստորագրած ընտրողի անվան դիմաց, սլաքներով ուղղում կատարելով: Ընտրողը պահանջել է այդ ամենը գրանցվի տեղամասի գրանցամատյանում, սակայն հանձնաժողովի նախագահը նախ ստել է, թե արձանագրել է, իսկ երբ ընտրողը պնդել է ցույց տալ գրառումը, պատասխանել է, որ գրանցամատյանը նայելու ենթակա չէ: Չնայած ընտրողի պնդումներին, այդպես էլ այլ անձանց փոխարեն ստորագրությունների փաստը չի արձանագրվել գրանցամատյանում:

5. Թիվ 2/10 տեղամասում ժամը 12:30-ի սահմաններում հանձնաժողովի անդամը անձնագիրը կնքել է հանձնաժողովի կնիքով, իսկ ծրարը կնքել է դրոշմակնիքով: Դիտորդը լսել է, թե ինչպես է քվեարկող անձը այլ անձի հետ խոսելիս հայտնել, որ այլ անձնագրով է քվեարկել:
6. Թիվ 2/15 տեղամասում հանձնաժողովի անդամը (Կարինե Դալլաքյան) քվեարկել է այլ անձի փոխարեն՝ ստորագրելով և կնիք դնելով ընտրողների ցուցակում: Դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին, որը հայտնել է, որ սխալ է տեղի ունեցել: Նշյալ խախտումը չի արձանագրվել գրանցամատյանում:
7. Թիվ 2/22 տեղամասում ժամը 11:20-ի սահմաններում դիտարկվել է 15-ից ավելի անձանց միաժամանակյա: Խախտումը չի արձանագրվել գրանցամատյանում, չնայած, որ այդ մասին հանձնաժողովի նախագահը տեղեկացված է եղել:

Թիվ 3 ընտրատարածք

8. Թիվ ՀՀ թիվ 3/02 ընտրատեղամասում Վարդուհի Սարգսյանի և Խաչատրյան Մարիետտայի փոխարեն քվեարկել են այլ անձինք: Փաստը բացահայտվել է, երբ վերջիններս գնացել են ընտրատեղամաս: Ի պատասխան ընտրողների հարցին, թե ինչու են այլ անձինք իրենց փոխարեն ստորագրել և քվեարկել, հանձնաժողովի ցուցակ վարող անդամը պատասխանել է, որ դա շփոթմունք է և խառնել են տողերը և ամեն ինչ կկարգավորվի: Այդ խախտումը չի արձանագրվել հանձնաժողովի գրանցամատյանում և չի ձեռնարկվել ոչ մի գործողություն խախտման կապակցությամբ:
9. Թիվ 3/04 տեղամասում քվեարկող Վահե Երիցյանը հայտարարել է, որ իր և իր կնոջ փոխարեն քվեարկել են, հանձնաժողովի անդամը նրա տվյալները մուտքագրել է ուրիշի անվան դիմաց, վերջինս աղմուկ է բարձրացրել: Կազմվել է արձանագրություն: Թոհուբոհից հետո Վահե Երիցյանը հայտնաբերել է, որ այն տողում, որտեղ մուտքագրվել էին իր անձնագրային տվյալները, արդեն իսկ կա ստորագրություն և կնիք: Հանձնաժողովի անդամները հայտարարել են, որ տեղյակ չեն, թե ինչպես է ստորագրությունը և կնիքը հայտնվել այդ տողում: Հանձնաժողովի անդամներից մեկն էլ ասել է, որ ինքը չէր կարող արած լինել նման բան, քանի որ կնիքը ծուռ է դրված: Վահե Երիցյանը շարունակել է պնդել, որպեսզի իրեն տրամադրվի քվեարկելու հնարավորություն, ինչին ի պատասխան տեղամասային հանձնաժողովի նախագահն առաջարկել է պարզել, թե ովքեր են քվեարկել Երիցյանի և իր կնոջ փոխարեն, որպեսզի վերջիններս էլ նրանց փոխարեն քվեարկեն: Նրանք հրաժարվել են, կազմվել է արձանագրություն: *Առկա է ձայնագրություն:*
10. Թիվ 3/05 տեղամասի հանձնաժողովի անդամները տարբեր պատճառաբանություններով դուրս են եկել տեղամասից, որոնց փոխարինել են այլ հանձնաժողովի անդամներ: Դիտորդը տեղամասի շրջակայքում նկատել է հավաքված քաղաքացիների, ովքեր խոսել են ընտրակաշառքից:
11. Թիվ 3/06 տեղամասում քվեարկող Անժելա Հարությունյանը հայտարարել է, որ իր փոխարեն, քվեարկել են, ինչպես նաև իր մահացած պապիկի՝ Ռոբերտ Հարությունի Նազարեթյանի, տատիկի՝ Կարապետյան Անժելայի, հորեղբոր՝ Արամ Ռոբերտի Նազարեթյանի և հայր՝ Հարություն Ռոբերտի Նազարեթյանի փոխարեն: Նախագահն

առաջարկել է քվեարկել առանց ստորագրելու, Անժելա Հարությունյանին ուղղակի հատկացվել է քվեթերթիկ և նա քվեարկել է առանց ստորագրելու: Խախտումը չի արձանագրվել գրանցամատյանում: Ի դեպ, ստուգելով ՀՀ անձնագրային և վիզաների վարչության կողմից հրապարակված ընտրողների ցուցակները, պարզվել է, որ Ռոբերտ Հարությունի Նազարեթյանի անունն առկա չէ դրանցում, այնինչ ընտրատեղամասում առկա քվեարկողների ցուցակում վերջինիս անունը եղել է: Հետևաբար, կա կասկած, որ ՀՀ անձնագրային և վիզաների վարչության կողմից **հրապարակված ընտրողների ցուցակները և ընտրատեղամասում առկա քվեարկողների ցուցակները տարբերվում են**:

12. Թիվ 3/6 տեղամասում դիտորդը նկատել է, թե ինչպես է ընտրողների ցուցակի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը ստորագրում և կնիքում ընտրողների ցուցակը՝ համեմատելով սեղանի տակ թաքցված թղթի տվյալները ընտրողների ցուցակի տվյալների հետ: Առկա է տեսաձայնագրություն *(տես կից տեսագրությունը ըստ տեղամասի)* :
13. Թիվ 3/10 տեղամասի շրջակայքում 50 մետր շառավղով պարբերաբար դիտարկվել են մարդկանց և մեքենաների կուտակումներ: Քվեարկողները խմբերով են ժամանել/բերվել տեղամաս քվեարկության օրվա ընթացքում: Տեղամասում պարբերաբար 15-ից ավել քվեարկողներ են եղել, սակայն այդ դեպքերը չեն արձանագրվել: Տեղամասում է գտնվում անհայտ անձ, ով ցուցակներ է լրացնում: Հանձնաժողովի անդամների հերթափոխ տեղի չի ունեցել, հանձնաժողովի նախագահին տեղեկացվել է կարգի խախտման մասին, վերջինս անգործություն է դրսևորել:
14. Թիվ 3/20 տեղամասում գրանցվել է քվեարկողների խմբերի տեղափոխում դեպի տեղամաս, քվեարկողների ուղղորդում: Խախտվել է հանձնաժողովի անդամների՝ ըստ վիճակահանության 2-ժամյա պարբերականությամբ գործառույթների հերթափոխ: Հերթափոխը միայն երկու անգամ է տեղի ունեցել, որից հետո մինչև քվեարկության ավարտը հերթափոխ տեղի չի ունեցել: Պարբերաբար հայտնաբերվել է այլ անձանց փոխարեն քվեարկելու դեպքեր, սակայն հանձնաժողովի նախագահը չի արձանագրում նման դեպքերը: Առկա է այլ անձանց փոխարեն քվեարկելու դեպքը հավաստող ապացույց՝ ձայնագրություն *(տես կից ձայնագրությունները ըստ տեղամասի)*: Պարբերաբար Տեղամասից 50 մետր շառավղով հայտնաբերվել են մարդկանց և մեքենաների կուտակումներ և նույն ժամանակահատվածում քվեարկության սենյակում 15-ից ավելի քվեարկողներ միաժամանակ ներկա են տեղամասում: Գրանցվել է քվեարկության գաղտնիության խախտում: *(տես կից լուսանկարը ըստ տեղամասի) :*
15. Թիվ 3/22 տեղամասից տեղեկացրել են, որ Հայկ, Աիդա, Տարոն Բրուսյանների փոխարեն կատարվել է քվեարկություն՝ ստորագրված են եղել քվեարկողների ստորագրած ցուցակներում իրենց անունների դիմաց:
16. Թիվ 3/24 տեղամասում տեղի է ունեցել Հենրիկ Հովակիմյանի փոխարեն քվեարկություն: Քաղաքացի Թադևոսյան Մանվելը տեղեկացրել է, որ իր և իր մոր փոխարեն, ինչպես նաև իրենց հարևանների՝ Ալեքսանյան Ալիկի և Ալեքսանյան Դիանայի փոխարեն, որոնք այժմ գտնվում են Շվեդիայում, կատարվել են քվեարկություններ: Նույն հանձնաժողովի անդամը տեղեկացրել է, որ սխալ է տեղի

ունեցել: Թադևոսյանը հայտնել է նաև, որ քվեարկված է եղել նաև իրենց մյուս հարևանի՝ Հենրիկ Հովակիմյանի փոխարեն, որը մահացած է:

17. Թիվ 3/28 տեղամասում տեղի է ունեցել այլ անձանց փոխարեն քվերակություն: Մասնավորապես, Մարտիրոսյան Արթուրի փոխարեն արդեն քվեարկած են եղել երբ նա ժամանել է քվեարկության: Գրանցամատյանում գրառվել է խախտման մասին:
18. Թիվ 3/29 տեղամասում բացահայտվել է անձանց փոխարեն քվեարկելու դեպք: Ժամը 15:00-ի սահմաններում քվեարկության էին եկել երկու քաղաքացի՝ ամուսիններ, որոնք հայտնաբերեցին, որ իրենց փոխարեն արդեն քվեարկել էին: ՀՀկ վստահված անձը՝ Անուշավան անունով, իրենց անմիջապես դուրս հրավիրեց՝ ասելով «ոչինչ, այդպես էլ է պատահում»: ԶԼՄ ներկայացուցիչ՝ Անի Ասատրյանը դուրս եկավ իրենց հետևից և լսեց իրենց խոսակցությունը, մասնավորապես Անուշավանը քվեարկության եկած անձանց ասում էր, որ հատուկ այդ անձանց դեմ արված մի բան չէ, դեպքի մասին: ԶԼՄ ներկայացուցիչները հանձնաժողովի նախագահին են դիմել՝ խախտման փաստը գրանցամատյանում արձանագրելու համար, հանձնաժողովի նախագահը չի գրանցել դեպքը գրանցամատյանում և չի ձեռնարկել ոչ մի գործողություն:
19. Թիվ 3/30 տեղամասում պարբերաբար գտնվել են ավելի քան 15 քվեարկող:
20. Թիվ 3/33 տեղամասում տեղի է ունեցել քվեարկության գաղտնիության խախտում՝ պարբերաբար քվեախցիկ են մտել միաժամանակ մեկից ավել քվեարկողներ:

Թիվ 4 ընտրատարածք

21. Թիվ 4/01 տեղամասում ժամը 10:38-ի սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Ռոմիկ Դանիալը նկատել է, որ ընտրողները ուղղորդվել են տեղամաս, մասնավորապես՝ միկրոավտոբուսով 3 հոգի բերել են տեղամաս, իսկ հանձնաժողովի նախագահը դուրս է եկել և անմիջական կապի մեջ է եղել միկրոավտոբուսի վարորդի հետ: Ժամը 11:32 նույն միկրոավտոբուսը կրկին 10-ից ավելի մարդ է բերել տեղամաս: *(տես կից ներկայացվող 4.01_04 վերնագրմամբ տեսագրությունը):*
22. Թիվ 4/01 տեղամասում ժամը 11:30-ի սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ՝ Ռոմիկ Դանիալը արձանագրել է քվեարկության գաղտնիության խախտում, մասնավորապես՝ ՕԵԿ վստահված անձ Մարզպետ Դալլաքյանը, ԲՀԿ վստահված անձ՝ Միհերը և հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ազոյանը մոտեցել և ուշադիր զննել է քաղաքացու քվեարկելու պահը քվեախցիկի մոտ՝ երկար մնալով *(տես կից ներկայացվող 4.01_01, 4.01_02 և 4.01_03 վերնագրմամբ տեսագրությունը):*
23. Թիվ 4/01 տեղամասում ժամը 11:33-ի սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Ռոմիկ Դանիալը նկատել է, որ հանձնաժողովի նախագահը 3 անգամ մտել է քվեախցիկ օգնելու համար, որոնցից մի անգամ հստակ լսվել է, որ ասում է «ձախը կնշես» արտահայտությունը նաև մի քանի անգամ առանց քվեախցիկին մոտեանալու է հուշել քաղաքացիներին *(տես կից ներկայացվող 4.01_01 և 4.01_07 վերնագրմամբ տեսագրությունները):*

24. Թիվ 4/01 տեղամասում ժամը 13:39-ի դրությամբ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի Ռոմիկ Դանիալը նկատել է, որ պարբերաբար 15-ից ավելի քվեարկողներ են եղել քվեարկության սենյակում, ինչի արդյունքում սահմանափակվել է քվեարկության գործընթացը լիարժեք վերահսկելու դիտորդների և լրագրողների հնարավորությունը, նախագահը հրաժարվել է արձանագրել և կանխել այդ իրավիճակը *(տես կից ներկայացվող 4.01_01 վերնագրմամբ տեսագրությունը):*

25. Թիվ 4/01 տեղամասում «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի Ռոմիկ Դանիալը արձանագրել է, որ Միերը (ԲՀԿ վստահված անձ) և Մարզպետ Դալաքյանը (ՕԵԿ վստահված անձ) քվյարկության սկզբից մինչև կեսօր վկայական չեն ունեցել: Դիտորդները բազմիցս զգուշացրել են նախագահին, որը չի արձագանքել*(տես կից ներկայացվող 4.01_05 և 4.01_06 վերնագրմամբ լուսանկարները):*

26. Թիվ 4/02 տեղամասում ժամը 01:00-ի սահմաններում հանձնաժողովի նախագահ Արման Եփրեմյանը արդյունքների ամփոփման արձանագրությունը չի տեղադրել պարկի մեջ *(տես կից ներկայացվող 4.02 վերնագրմամբ տեսագրությունը):*

27. Թիվ 4/05 տեղամասում ժամը 14:05-ի սահմաններում «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Գոհար Աբրահամյանը և «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի դիտորդ Անահիտ Ամալյանը արձանագրել են, որ քվեարկող Հարությունյան Տաթևիկի մայրը եկել է քվեարկության և հայտնաբերել, որ իր իր դստեր՝ Հարությունյան Տաթևիկի և իր հայր՝ Խալաֆյան Սոկրատի անվան դիմաց, որը ապրում է Գերմանիայում արդեն քվեարկվել է, մոտեցել ասել է հանձնաժողովի նախագահին սակայն խախտումը չի արձանագրվել գրանցամատյանում *(տես կից ներկայացվող 4.5_01 և 4.5_02 վերնագրմամբ տեսագրությունները):*

28. Թիվ 4/05 տեղամասում ժամը 01:00-ի սահմաններում «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Գոհար Աբրահամյանը և «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի դիտորդ Անահիտ Ամալյանն արձանագրել են, որ քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում վստահված անձանցից մեկի և հանձնաժողովի նախագահի միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որից հետո **որոշում է ընդունվել կրկին հաշվարկել ձայները՝** ինչը որևէ կերպ չի արձանագրվել: Միջադեպից առաջ «այո»-ի քանակը կազմել է 205, իսկ «ոչ»-ը՝ 609, իսկ ապօրինի վերահաշվարկից հետո «ոչ»-ը՝ 300, «այո»-ն՝ 500: *(տես կից ներկայացվող 4.5_03 վերնագրմամբ ձայնագրությունը):*

29. Թիվ 4/26 տեղամասում ժամը 12:00-ից 13:00 ընկած ժամանակահատվածում մի խումբ կանայք եկել էին քվեարկելու տեղեկանքներով, որոնց մեջ, սակայն, ըստ դիտորդ Գոհար Հակոբյանի և ՀԱԿ-ի հանձնաժողովի անդամ Վահրամ Թոքմաջյանի՝ չի եղել անձնագրային բաժնի կնիքը: Նույն անձինք եկել են կրկին անգամ անձնագրերով, սակայն առաջին իսկ կրկնաքվեարկելու փորձ կատարած աղջկան ճանաչել են դիտորդները և Վահրամ Թոքմաջյանը, և չնայած վստահված անձ Գրիգորի և հանձնաժողովի անդամ Վահրամ Թոքմաջյանի պնդմանն այն մասին, որ խախտման վերաբերյալ գրառում կատարվի գրանցամատյանում, հանձնաժողովի նախագահը տվյալ աղջկան վերցրել է և փախցրել տեղամասից:

30. Թիվ 4/26 տեղամասում ժամը 22:25-ին արդյունքների ամփոփման ժամանակ հանձնաժողովի նախագահը պարզապես ոչնչացրել է «ոչ»-ի քվեաթերթիկների մի մասը: Դրա վերաբերյալ հանձնաժողովի անդամ՝ Թոքմաջյանը հատուկ կարծիք է թողել արձանագրության մեջ:
31. Թիվ 4/28 տեղամասում դիտորդ Հայկ Սարգսյանը հայտնաբերել է, որ սկզբնական հաշվարկի ժամանակ հաշվարկվել է 484 «ոչ», 350 «այո» և 52 «անվավեր» քվեաթերթիկ, որոնք վերահաշվարկվել են՝ ինչի արդյունքում համամասնությունը փոխվել է հետևյալ կերպ՝ շուրջ 720 «այո» և 150 «ոչ»: Այս հանգամանքները հանձնաժողովի նախագահից պահանջել են արձանագրել գրանցամատյանում Սարգսյանը և ՀԱԿ-ի վստահված անձ՝ Անահիտ Ավանեսյանը, ինչպես նաև ՀԱԿ հանձնաժողովի անդամը, սակայն հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել *(տես կից ներկայացվող 4.28 վերնագրմամբ լուսանկարը):*

Թիվ 5 ընտրատարածք

32. Թիվ 5/15 և 5/16 տեղամասերում ժամը 15:40-ի սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Նվարդ Մարգարյանը արձանագրել է, որ մի կին մի քանի անգամ քվեարկողների խմբեր է բերել քվեարկության սենյակ երկու տեղամասերում, պարզվել է, որ այդ կինը ՀՀԿ-ի վստահված անձ է, որի ինքնությունը հանձնաժողովի անդամները հրաժարվել են արձանագրել:

33. Թիվ 5/19 տեղամասում դիտորդ՝ Սուրեն Ղազարյանը արձանագրել է , թե ինչպես է հանձնաժողովի անդամը անհայտ անձի կողմից փոխանցվող քվեաթղթերը լցոնում քվեատուփի մեջ *(տես կից ներկայացվող 5.19 վերնագրմամբ տեսագրությունը):*
34. Թիվ 5/34 տեղամասում դիտորդների դիտարկմամբ ՀՀԿ վստահված անձ՝ Գևորգ Հովհաննիսյանը հրաժարվել է նախագահին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթը: Խոչընդոտել են ՀԱԿ վստահված անձին իր մոտ կատարել նշումներ ընտրողների ցուցակներից նրանց հերթական համարների վերաբերյալ: Հիշյալ խախտումները չեն արձանագրվել գրանցամատյանում:
35. Թիվ 5/10 տեղամասում «Ասպարեզ» օրաթերթի լրագրող Գրիգորյան Արփին արձանագրել է, որ հաշվարկի ժամանակ «այո»-ի ձայները չեն հաշվել, ասելով, որ միայն «ոչ»-ի ձայները կհաշվեն և մասնակիցների թվից հանելով, կստանան «այո»-ի քանակը: Մի քանի «ոչ» քվեաթերթիկ տեղափոխել են այո-ի տրցակ և դիտորդի այն հարցին, թե ինչու են այդպես անում ասել են, որ այդպես է պետք *(տես կից ներկայացվող 5.10 վերնագրմամբ ձայնագրությունը):*
36. Թիվ 5/25 տեղամասում «Թրանսփերենսի ինթերնեյշնլ ՀԿ»-ի դիտորդ Ռոմիկ Դանիալը արձանագրել է, որ վստահված անձը տեղամասում գտնվել է առանց վկայականի և հանձնաժողովի *(տես կից ներկայացվող 5.25 վերնագրմամբ տեսագրությունը):*

Թիվ 6 ընտրատարածք

37. Թիվ 6/06 տեղամասում ժամը 12:34-ի դրությամբ «Asparez.am» լրատվական կայքի լրագրող Էդուարդ Գյոզալյանը նկատել է, որ 15-ից ավելի քվեարկողներ են եղել քվեարկության սենյակում, ինչի արդյունքում սահմանափակվել է քվեարկության գործընթացը լիարժեք վերահսկելու դիտորդների և լրագրողների հնարավորությունը, նախագահը հրաժարվել է արձանագրել և կանխել այդ իրավիճակը:
38. Թիվ 6/06 տեղամասում Էդուարդ Գյոզալյանը նկատել է, որ ՀՀԿ վստահված անձ Վլադիմիր Գալստյանը քվեարկության սկզբից մինչև վերջ ուղղորդում էր քվեարկողներին, մասնավորպես 2-3 անգամ մտել է նրանց հետ քվեախցիկ, ինչպես նաև քվեախցիկների ճեղքերից նայում էր ներս: Նա ամբողջ օրը տեղամասում գտնվել է առանց վկայականը փակցնելու: Նախագահին խախտումների հետ կապված պահանջել ենք արձանագրել խախտումը, սակայն չի արձանագրել *(տես կից ներկայացվող 6/06_01 վերնագրմամբ լուսանկարը և 6.06_02 վերնագրմամբ տեսագրությունը):*

39. Թիվ 6/06 տեղամասում մինչև ժամը 14:00 Էդուարդ Գյոզալյանը նկատել է կրկնաքվեարկության 2 դեպք, մասնավորապես՝ 2 երիտասարդ 3-4 անգամ եկել են քվեարկության նույնականացման քարտերով, նախագահը հրաժարվել է արձանագրել այդ հանգամանքները *(տես կից ներկայացվող 6.06_03 և 6.06_04. վերնագրմամբ լուսանկարները):*

40. Թիվ 6/03 դիտորդը արձանագրել է, որ տեղամասում քվեաթերթիկները ժամանակավորապես անհետացել են:

Ընտրատարածք 7

41. Թիվ 7/1 տեղամասում ժամը 20:43:57 սահմաններում «Ասպարեզ» օրաթերթի լրագրող Քեթքարթ Ուիլը դիտարկել է արդյունքների ամփոփման կարգի խախտում: Մասնավորապես, լրագրողը դիտարկել է, որ տեղամասի դռները փակված չեն, իսկ հանձնաժողովի անդամները ընթրում են ամփոփման ընթացքում:
42. Թիվ 7/1 տեղամասում ժամը 15:19:09 «Ասպարեզ» օրաթերթի լրագրող Քեթքարթ Ուիլը նկատել է, որ երկու քույրեր Հռիփսիմե և Գայանե Հովսեփյանները եկել են քվեարկության, սակայն իրենց անվան դիմաց արդեն եղել են ստորագրություններ: Փաստը հրաժարվել է արձանագրել հանձնաժողովի նախագահը:
43. Թիվ 7/1 տեղամասում ժամը 12:35:43 սահմաններում «Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցիչ Քեթքարթ Ուիլը դիտարկել է ավելի քան 15 ընտրողի միաժամանակյա ներկայություն տեղամասում, ինչի արդյունքում քվեարկության սենյակում անվերահսկելի իրավիճակ էր և խախտված էր քվեարկության ամբողջ գործընթացը դիտարկելու հնարավորությունը:

44. Թիվ 7/1 տեղամասում ժամը 16:08:49 սահմաններում «Ասպարեզ» օրաթերթի լրագրող Քեթքարթ Ուիլը դիտարկել է քվեաերթիկի դուրս հանում տեղամասից և ներս բերում (կցվում է տեսաձայնագրություն՝ ըստ տեղամասի): Այս փաստը հայտնվել է հանձնաժողովի նախագահին, սակայն այն չի արձանագրվել գրանցամատյանում:
45. Թիվ 7/1 տեղամասում ժամը 09:49:56 սահմաններում «Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցիչ Քեթքարթ Ուիլը դիտարկել է, որ ՀՀԿ երեք ներկայացուցիչներ միաժամանակ գտնվում են տեղամասում: Այս փաստը հայտնվել է հանձնաժողովի նախագահին, սակայն այն չի արձանագրվել գրանցամատյանում:
46. Թիվ 7/2 տեղամասում ժամը 22:59:38 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Անի Սիրեկանյանը դիտարկվել է արդյունքների ամփոփման կարգի խախտում: Լույսերը անջատել են և լույսի բացակայության պայմաններում կատարել են ինչ-որ գործողություններ՝ շարունակելով հաշվարկի գործընթացը: Այս դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում:
47. Նույն տեղամասում ժամը 01:07:44 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Անի Սիրեկանյանը դիտարկել է քվեարկության արդյունքների կեղծում: Տեղամասում հաշվարկի ժամանակ ակնհայտ անհամապատասխանություն է եղել հանձնաժողովի հայտարարած թվերի և քվեարկության մասնակիցների թվերի միջև, քանի որ ավելի քիչ են մասնակցել և դիտորդը դրանք գրանցել է: Հաշվարկի ժամանակ «այո» և «ոչ»-ի ձայների գրեթե հավասար են եղել մինչ տեղամասի լույսերն անջատվելը: Լույսերը միացնելուց հետո ՈՉ-ի տրցակից հանձնաժողովի անդամները վերահաշվարկելու արդյունքում հանկարծ հայտնաբերել և հանել են մի շարք անվավեր քվեաթերթիկներ, սեղանին դրված «այո»-ի տրցակը կտրուկ մեծացել է և արդյունքում տվյալ տեղամասում «այո»-ն հաղթել է ձայների մեծ տարբերությամբ:
48. Թիվ 7/2 տեղամասում ժամը 20:46:40 սահմաններում Asparez.am լրատվական կայքի լրագրող Քեթի Բեգիաշվիլին դիտարկել է քվեարկության պարագաները դուրս բերում ընտրատեղամասից, մասնավորապես նա տեսել է թե ինչպես է հանձնաժողովի անդամը դուրս եկել կնիքով և որոշ ժամանակ անց նորից վերադարձել տեղամաս: Վերոգրյալ փաստերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում, սակայն հանձնաժողովի նախագահը տեղեկացված է եղել:
49. Թիվ 7/2 տեղամասում ժամը 18:15:20 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Անի Սիրեկանյանը դիտարկել է բազմակի՝ այլ անձանց փոխարեն քվեարկության փորձ: Երկու տղամարդ փորձել են քվեարկել Օհանյան Հարությունի և Գասպարյան Սամվելի փոխարեն: Սակայն դիտորդը և հանձնաժողովի անդամը նկատել են, որ նրանց անձնագրերն արդեն կնքված են: Նրանցից մեկը արագ անձնագիրը խլել և փախուստի է դիմել, իսկ մյուսը անձնագիրը հանձնել է ոստիկանին (կցվում է լուսանկարներ՝ ըստ տեղամասի):

50. Նույնանման փորձը դիտարկվել է ժամը 17:57:49 սահմաններում Իրավունքի Եվրոպա Միություն ՀԿ դիտորդ Գայանե Մարտիրոսյանի կողմից: Արդեն մեկ անգամ քվեարկած անձը մտել է խմբով, հստակ իմանալով հանձնաժողովի որ անդամին մոտենան: Դիտորդի ահազանգից հետո կանխվել է կրկնակի քվերակությունը, բայց ոստիկանը անձնագիրը առանց արձանագրություն կազմելու փոխանցել է կրկնակի քվերակության փորձ կատարած անձին: Ըստ դիտորդի իրավիճակը այդ տեղամասում վերահսկվել է ոստիկանների կողմից, որոնք առանց նախագահի հրավերի գտնվում էին քվեարկության սենյակում: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
51. Թիվ 7/4 տեղամասում ժամը 02:34:39 սահմաններում Իրավունքի Եվրոպա Միավորում ՀԿ դիտորդ Խաչիկ Ալբերտի Ազարյանը դիտարկել է ընտրողների ուղղորդում տեղամասում և տեղամասից դուրս: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:
52. Թիվ 7/15 տեղամասում ժամը 23:35:20 Asparez.am լրատվական կայքի լրագրողներ Սերդա Օզբենյանը և Էլիոտ Ռաֆֆին դիտարկել են քվեարկության արդյունքների կեղծում: Տեղամասում հաշվարկի ժամանակ անջատել են լույսերը: Ներկաներից մեկը վերցրել է քվեաթերթիկների մի տրցակը և փորձել դուրս վազել սենյակից: Մինչև լույսերը անջատելը տեղամասում հաղթել է «ոչ»-ը, սակայն լույսերը միացնելուց հետո կատարվել է վերահաշվարկ, ինչի արդյուքնում կտրուկ ավելացել է անվավերների թիվը որոնց մեջ են հայտնվել «ոչ»-ի քվեաթերթիկներ: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:
53. Թիվ 7/15 տեղամասում ժամը 20:23:13 սահմաններում Asparez.am լրատվական կայքի լրագրող Սերդա Օզբենյանը և Էլիոտ Ռաֆֆին դիտարկել են, որ հանձնաժողովը անորոշ ժամանակով ամփոփիչ նիստի ընդմիջում է հայտարարել: Այս փաստը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:
54. Թիվ 7/15 տեղամասում ժամը 18:18:04 սահմաններում Asparez.am լրատվական կայքի լրագրողներ Սերդա Օզբենյանը և Էլիոտ Ռաֆֆին դիտարկել են ընտրողների խմբերի փոխադրում դեպի տեղամաս կամ տեղամասից տեղամաս: Մասնավորապես, ավտոբուսով ծերերի մեծ խմբեր են բերվել քվեարկելու: Այդ ժամանակահատվածում կուտակումներ են գոյացել նաև քվեարկության սենյակում և քվեարկության գործընթացը լիարժեք դիտարկել հնարավոր չի եղել: Նախագահը դրսևորել է անգործություն: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել:
55. Թիվ 7/15 տեղամասում ժամը 12:21:21 սահմաններում Asparez.am լրատվական կայքի լրագրողներ Սերդա Օզբենյանը ահազանգել է, որ հանձնաժողովի նախագահ Կարինե Կարապետյանը մերժել է Սերդա Օզբենյանին կազմել արձանագրություն կուտակումների վերաբերյալ: Տեղամասում պարբերաբար քաոս է տիրել և քվեարկության գործընթացը դիտարկել հնարավոր չի եղել: (կցվում է տեսաձայնագրություն՝ ըստ տեղամասի):

56. Թիվ 7/15 տեղամասում ժամը 12:17:34 սահմաններում Asparez.am լրատվական կայքի լրագրողներ Սերդա Օզբենյանը դիտարկել են կողմնակի՝ վկայական չունեցող, անձանց և նույն կազմակերպությունից մեկից ավելի անձանց ներկայություն տեղամասում: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել:
57. Թիվ 7/15 տեղամասում դիտորդներ Սերդա Օզբենյանը և Էլիոտ Ռաֆֆին դիտարկել են տղամարդ ընտրողի կնոջ անձնագրով քվեարկելու փորձը: Դիտորդների կողմից բարձրաձայնելու արդյունքում հանձնաժողովի անդամը արագ փակելով անձնագիրը և վերադարձնելով անձին ուղորդել է այլ տեղամաս: Միջադեպը հանձնաժողովի անդամները հրաժարվել են արձանագրել:
58. Թիվ 7/15 տեղամասում Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ ՀԿ լրագրող՝ Միլլեր Մաթյուն հայտնել է այն մասին, որ Ընտրատեղամասում եղել են անհայտ անձիք, ներկայացել են դիտորդ առանց հավաստող փաստաթղթի, որի մասին տեղյակ է եղել նաև հանձնաժողովի նախագահը և որևէ միջոց չի ձեռնարկել խախտումը վերացնելու համար:
Արդեն իսկ քվերկած անձը փորձել է կատարել կկրկնակի քվեարկություն, որը կանխվել է հանձնաժողովի նախագահի կողմից:
Տեղամասում եղել է Ոստիկանության համար առանձնացված սենյակ, որից դեպի ընտրատեղամաս ազատ ելումուտ են արել ոստիկանները:
Ընտրատեղամասի շրջակայքում եղել են բավականին մեծ թվով մարդկանց և մեքենաների կուտակումներ, որի վերաբերյալ լրագրողի զգուշացումները թողնվել են անհետևանք, անհետևանք է թողնվել նաև լրագրողի պահանջը՝ վերը նշված խախտումների վերաբերյալ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ:
59. Թիվ 7/26 տեղամասում ժամը 16:53:18 սահմաններում Իրավունքի Եվրոպա Միավորում ՀԿ դիտորդը դիտարկել է, որ քաղաքացի՝ Տիգրան Արմենի Աճեմյանը հայտնաբերել է, որ իր եղբոր Երվանդ Արմենի Աճեմյանի անվան դիմաց արդեն քվեարկած է այն դեպքում, երբ վերջինս գտնվում է ԱՄՆ-ում: Չի արձանագրվել, քաղաքացուն բացատրվել է հանձնաժողովի նախագահի կողմից, որ քաղաքացու բողոքը գրանցելու տեղ չկա:

Թիվ 8 ընտրատարածք

60. Թիվ 8/21 տեղամասում ժամը 13:08:46 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Նարինե Արտավազդի Օհանյանը արձանագրել է բազմակի՝ այլ անձի փոխարեն քվեարկության փորձ: Լրացուցիչ ցուցակով ընտրելու համար եկել է մի քվեարկող, դիտորդը նկատել է, որ անձնագիրը արդեն կնքված է: Բարձրաձայնելուց հետո այդ անձը արագ հեռացել է, սակայն հիշյալ դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:
61. Թիվ 8/21 տեղամասում ժամը 10:56:09 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Նարինե Արտավազդի Օհանյանը արձանագրել է քվեարկության գաղտնիության խախտում: Վստահված անձն անարգել մտել է քվեախցիկ և հետևել քաղաքացիներին ընտրություն կատարելիս: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել խախտումը կամ կանխել՝ արգելել վստահված անձին մուտք դեպի քվեախուց:

62. Թիվ 8/27 տեղամասում ժամը 14:11:24 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Մամիկոն Հարությունի Հովսեփյանն արձանագրել է կողմնակի՝ վկայական չունեցող, անձանց և նույն կազմակերպությունից մեկից ավելի անձանց ներկայություն տեղամասում: Այս ամենը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:
63. Թիվ 8/27տեղամաս «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ՝ Կամո Սուրենի Դավթյանից և լրագրող Մամիկոն Հարությունի Հովսեփյանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ տեղամասում քվեատուփը տեղադրված է եղել մուտքի դռան մոտ, հանձնաժողովի նախագահը պարբերաբար հայտնվել է քվեախցիկի հետնամասում, ինչով խաթարել է քվերակության գաղտնիությունը, ուղղորդել է քվերակողներին,ավելին վերջինս չի կրել անվանաքարտ, ինչով հնարավոր կլիներ հավաստել նրա պաշտոնը և ինքնությունը:
Հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է դիտորդի և լրագրողի տեղամասում ազատ տեղաշարժման իրավունքը, հնչեցրել է վիրավորական արտահայտություններ դիտորդի և լրագրողի հասցեին այն բանից հետո, երբ նրանք առաջարկել են վերացնել խախտումները:
Այդ տեղամասում կահավորումը չի համապատասխանել օրենքով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ քվեախցիկների հետևում եղել են դռներ, որտեղից եղել է ելումուտ:
Կատարված առաջարկները՝ թերությունները վերացնելու և դրանք գրանցելու մասին թողնվել են անհետևանք:
64. Թիվ 8/35 տեղամասում ժամը 11:39:15 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Արմինե Մարգարովան արձանագրել է բազմակի՝ այլ անձի փոխարեն քվեարկության փորձ: Միջին տարիքի տղամարդը տեղամաս է ներկայացել ուրիշի անձնագրով և փորձել է գրանցվել քվեարկելու համար, իսկ հանձնաժողովի անդամը պատրաստվում էր գրանցել այդ անձին: Լրագրողների ներկայությամբ պայմանավորված հանձնաժողովի անդամներից մեկը բարձրաձայնել է խախտումը, տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին: Միջամտել են նաև հանձնաժողովի անդամները, ինչից հանձնաժողովի նախագահն ասել է թե իբրև ընտրողը շփոթել է և տեղամսից նրան հեռացրել են: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:
65. Թիվ 8/35 տեղամասում ժամը 23:27:27 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Արսեն Օհանյանը արձանագրել է արդյունքների ամփոփման կարգի խախտում: Տեղամասում անջատել են լույսերը և շրջել սեղանները, դրանց վրայից գետնին են թափվել քվեաթերթիկները և ծրարները: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:
66. Թիվ 8/14 տեղամասում ժամը 14:21:05 սահմաններում «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ դիտորդ Մինաս Սարգսյանը արձանագրել է քվեաթերթիկի դուրս հանում տեղամասից և ներս բերում: Քվեարկողը եկել է քվեարկելու, դիտորդը նկատել է, որ անձնագիրը արդեն կնքված է, մինչև փորձել է հանձնաժողովի նախագահի ուշադրությունը գրավել, այդ քաղաքացին հեռացել է քվեաթերթիկը վերցնելով իր հետ: Նույն փորձը կատարվել է 14:21:05 սահմաններում, սակայն այլ անձանց կողմից: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:

67. Թիվ 8/14 տեղամասում ժամը 11:32:25 և 12:46:27 սահմաններում «Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցիչ Քրիստինե Ռազմիկի Եդիգարյանը արձանագրել է ընտրողների ուղղորդում տեղամասում և տեղամասից դուրս: Քվեարկության սենյակի անմիջական հարևանությամբ շարունակաբար կատարվել է ընտրողների ուղորդում: Հանձնաժողովի նախագահը մերժեց արձանագրության կազմումը: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում: Առկա է տեսանյութ:
68. Թիվ 8/14 տեղամասում ժամը 11:32:25, 19:22:09 սահմաններում «Ասպարեզ» օրաթերթի ներկայացուցիչ Քրիստինե Ռազմիկի Եդիգարյանը արձանագրել է ընտրողների խմբերի փոխադրում դեպի տեղամաս և տեղամասից տեղամաս: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
69. Թիվ 8/25 տեղամասում ժամը 13:34:20 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը արձանագրել է բազմակի՝ այլ անձանց փոխարեն քվեարկություն: Երիտասարդ մի ընտրող քվեարկություն է կատարել **երկրորդ անգամ՝** քվեաթերթը գցել է քվեատուփի մեջ, որից հետո են ստուգել, որ նրա անձնագրում առկա է եղել դրոշմակնիքը: Նույն պահին խնդիրը բարձրաձայնվել է, սակայն ընտրողը շտապ հեռացել է տեղամասից: Նույնը կատարվել է ժամը 13:22:51 սահմաններում, որը արձանագրվել է դիտորդ Արսեն Մանուկյանի կողմից: Նույն անձի կողմից կատարվել է բազմակի քվեարկություն: Հանձնաժողովի նախագահը չի արձանագրել նշված խախտումը /Տեսանյութը առկա է/: Նման փորձ կատարվել է նաև ժամը 13:08:39 սահմաններում, երբ նույն անձը փորձել է քվեարկել արդեն կնքված անձնագրով: Հանձնաժողովի նախագահը մերժել է գրանցել խախտումը և սպառնացել ձեռքից վերցնել տեսանյութը: Ժամը 12:37:07 սահմաններում դիտորդը կրկին արձանագրել է, որ մի անձը քվեարկել է երկու անգամ: Հանձնաժողովի անդամը խախտումը չի արձանագրել: (կցվում է լուսանկարներ՝ ըստ տեղամասի):
70. Թիվ 8/25 տեղամասում ժամը 11:30:52 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը արձանագրել է մարդկանց և մեքենաների կուտակումներ տեղամասից 50 մետր շառավղով և այդ ժամանակահատվածում արձանագրվել է նաև քվեարկողների կուտակում քվեարկության սենյակում: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
71. Թիվ 8/25 տեղամասում ժամը 11:30:52 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը արձանագրել է քվեարկողին օգնելու կարգի խախտում: ԲՀԿ-ի վստահված անձը, առանց այդ մասին հանձնաժողովի նախագահին տեղեկացնելու և գրանցամատյանում գրանցվելու օգնեց ընտրողին քվեարկություն կատարել, ինչը նկատել են տեղամասում գտնվողները: Դիտորդի և հանձնաժողովի քարտուղար /ՀԱԿ/ դիտարկմանը, որ վստահված անձն իրավունք չունի օգնելու, դա կարգի խախտում է պետք է գրառել գրանցամատյանում: Հանձնաժողովի նախագահը մերժել է այդ պահանջը՝ ասելով որ ինքը ոչինչ չի տեսել, և նրանց ասածին չի հավատում: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում: (կցվում է տեսաձայնագրություն՝ ըստ տեղամասի):

72. Թիվ 8/25 տեղամասում ժամը 11:09:15 սահմաններում «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ դիտորդ Անահիտ Սերյոժայի Առուստամյանը արձանագրել է ավելի քան 15 ընտրողի միաժամանակյա ներկայություն տեղամասում: Այս

դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում: (կցվում է լուսանկարներ՝ ըստ տեղամասի):

73. Թիվ 8/25 տեղամասում ժամը 07:04:50 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը արձանագրել է տեղամասային հանձնաժողովի (ՏՀ) գործողությունների կազմակերպման կարգի խախտում, որը չի արձանագրվել:
74. Թիվ 8/25 տեղամասում ժամը 07:04:50 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը արձանագրել է ընտրատեղամասի սխալ կահավորում: Նույն դպրոցում 2 տեղամաս էր, որոնք բաժանված են եղել կապույտ պոլիէտիլենային պարկով: Քվեախցիկները տեղադրված էին այնպես /3 հատ/, որ մեկ տեղամասի ընտրողը տեսանելի էր մյուս տեղամասի քվեախցի ընտրողին: Քվեախցիկներից մեկի հետնամասում առկա էր դուռ, որտեղ մուտք ու ելք էին գործում հանձնաժողովի անդամները և վստահված անձինք: (կցվում է տեսաձայնագրություն՝ ըստ տեղամասի):
75. Թիվ 8/25 տեղամասում ժամը 18:20:01 սահմաններում «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ դիտորդ Անահիտ Սերյոժայի Առուստամյանը արձանագրել է կողմնակի՝ վկայական չունեցող անձանց և նույն կազմակերպությունից մեկից ավելի անձանց ներկայություն տեղամասում: Հետ են հրել դիտորդին, թույլ չեն տվել տեսագրել և ՀՀԿ վստահված անձը ասել է, որ իրավունք չունի տեսագրել: Այդ շենքում երեք ընտրատեղամաս կար ու սենյակներից մեկում անհայտ անձինք են կուտակվել, դիտորդի պնդմանը առ այն, որ հեռացնի օրենքով չթույլատրված անձնաց, հանձնաժողովի նախագահը չի միջամտել և չի արձագանքել, ասել է, որ ինքը իր հատվածը վերահսկում է: Նույնը մյուս հանձնաժողովի անդամներներն են պնդել և կուտակումները շարունակվել են: Նույնը շարունակվել է ժամը 19:36:49 սահմաններում: Դիտորդը դիտարկել է ՀՀԿ մի քանի /մոտ 3-8 անձանց/ վստահված անձի պարբերաբար ներկայություն տեղամասում: Խախտման փաստը արձանագրելը մերժվել է հանձնաժողովի նախագահի կողմից: Նույն տեղամասում ժամը 23:02:46 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը կրկին դիտարկել է կողմնակի անձանց ներկայություն տեղամասում:
76. Թիվ 8/25 տեղամասում ժամը 23:02:46 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը դիտարկել է քվեարկության արդյունքների կեղծումը: Ամփոփման ժամանակ տեղամասում են եղել մի քանի վստահված անձիք /ՀՀԿ 4-6 հոգի/: Քվեաթերթիկի արդյունքները բարձրաձայն չէին հայտարարվում՝ առնվազն 30 հատ «ոչ» որպես «այո» է հաշվարկվել: «Այո»-ի դեպքում միշտ վավեր են հաշվարկվել նշումներով քվեաթերթիկները, «ոչ»-ի դեպքում՝ անվավեր: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում: Առկա են տեսաձայնագրություններ/:
77. Թիվ 8/25 տեղամասում ժամը 23:02:46 սահմաններում Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ դիտորդ Արսեն Մանուկյանը դիտարկել է տեղամասի սահմանված ժամից՝ 20:00-ից ուշ փակում: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում: Հինգ րոպե ուշացումով են փակել ընտրատեղամասը, ներսում ընտրող չկար, սակայն հանձբաժողովի անդամները սպասողական դիրքում էին:
78. Թիվ 8/25 տեղամասում ժամը 13:38:08 սահմաններում «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ դիտորդ Անահիտ Սերյոժայի Առուստամյանը արձանագրել

է բազմակի՝այլ անձանց փոխարեն քվեարկություն: Դիտորդը նկատել է 4 անձի, որոնք քվեարկել են կրկնակի անգամ: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել: (կցվում է տեսաձայնագրություն՝ ըստ տեղամասի):

79. Թիվ 8/27 տեղամասում ժամը 01:18:28 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը արձանագրել է քվեարկության արդյունքների կեղծում: Հանձնաժողովի նախագահը ավելացրել է «Այո»-ի թերթիկները՝ իջեցրել է սեղանի տակ և այնտեղից հանել է ավելի շատ ընտրաթերթիկները: Հրաժարվել են գրանցել ահազանգը:
80. Թիվ 8/27 տեղամասում ժամը 21:55:30, 22:22:55, 23:13:44, 00:07:51, 00:35:58 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը դիտարկել է, որ տեղի է ունեցել արդյունքների ամփոփման կարգի խախտում: Մասնավորապես, հաշվարկը պարբերաբար ընդհատվել է և հանձնաժողովի նախագահը լքել է տեղամասը՝ առանց պատճառաբանությունների: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
81. Թիվ 8/27 տեղամասում 13:23:00 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը դիտարկել է, որ հանձնաժողովի անդամ պրն. Աշոտ Մուսախանյանի իրավունքները ոտնահարվեցին հանձնաժողովի նախագահ Սուրեն Խանյանի կողմից: Պրն. Մուսախանյանը իր մոտ էր հավաքում «այո»-ի օգտին քվեարկված քվեները և երբ հանձնաժողովի նախագահը հասկացավ, որ 8/27 տեղամասում «ոչ»-ի քվեներն ավելի շատ են, վերցրեց «այո»-ի քվեաթերթիկներն ու փոխանցեց հանձնաժողովի հանրապետական անդամին: (կցվում է տեսաձայնագրություն՝ ըստ տեղամասի):
82. Թիվ 8/27 տեղամասում ժամը 18:10:42 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Մամիկոն Հարությունի Հովսեփյանը արձանագրել է մարդկանց և մեքենաների կուտակումներ տեղամասից 50 մետր շառավղով և այդ նույն ժամանակ քվեարկության սենյակում քվեարկողների կուտակումներ են եղել, սակայն Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:
83. Թիվ 8/27 տեղամասում ժամը 18:19:04 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը արձանագրել է ընտրատեղամասի սխալ կահավորում: Տեղամասում առկա էր լույսավորության խնդիր, որը ստիպել է ընտրողին դուրս գալ քվեախցիկից, ինչը խախտել է ընտրողի քվեարկության գաղտնիությունը: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:
84. Թիվ 8/27 տեղամասում ժամը 11:37:56 և 12:28:04 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Մամիկոն Հարությունի Հովսեփյանը արձանագրել է քվեարկության գաղտնիության խախտում՝ բաց քվեարկություն: Քվերակության ժամանակ հանձնաժողովի նախագահի ու հանձնաժողովի ևս երկու հանրապետական անդամների աչքի առաջ բաց քվեարկություն էղավ, բայց երեքն էլ միաբերան հերքում էին կատարվածը: Թրանսփարենսիից խորհուրդ տվեցին ձայնագրել: Հանձնաժողովի անդամն ասում ա «..ես չեմ ասում տենց բան չի էղել, ես չեմ տեսել..» Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում: (կցվում է ձայնագրություն՝ ըստ տեղամասի):

85. Թիվ 8/27 տեղամասում ժամը 11:13:51, 11:49:20, 12:07:49, 12:13:41 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Մամիկոն Հարությունի Հովսեփյանը և ԹԻՀԿ-ի դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը արձանագրել են ընտրողների ուղղորդում տեղամասում և տեղամասից դուրս: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
86. Թիվ 8/27 տեղամասում ժամը 11:49:04 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը արձանագրել է ընտրողին օգնելու կարգի խախտում: Ընտրողին աջակցողների անունները չեն գրանցվել գրանցամատյանում:
87. Թիվ 8/27 տեղամասում ժամը 12:13:56 և 12:40:20 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը արձանագրել է ընտրողների խմբերի փոխադրում դեպի տեղամաս և տեղամասից տեղամաս: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:
88. Թիվ 8/27 տեղամասում ժամը 12:18:42 և 13:29:50 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը արձանագրել է ավելի քան 15 ընտրողի միաժամանակյա ներկայություն տեղամասում, սակայն հանձնաժողովի նախագահը չի միջամտել : Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
89. Թիվ 8/27 տեղամասում ժամը 12:52:15 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը արձանագրել է քվեարկության գաղտնիության խախտում: Հանձնաժողովի նախագահը մի քանի անգամ մոտեցել է քվեախցին ընտրողների հետ: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
90. Թիվ 8/27 տեղամասում ժամը 14:11:24 սահմաններում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Մամիկոն Հարությունի Հովսեփյանը արձանագրել է կողմնակի՝ վկայական չունեցող անձանց և նույն կազմակերպությունից մեկից ավելի անձանց ներկայություն տեղամասում: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
91. Թիվ 8/27 տեղամասում ժամը 14:16:01 սահմաններում «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը դիտարկել է ակնհայտ քարոզչություն «Այո» ի օգտին տեղամասում և հարակից տարածքում: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:
92. Թիվ 8/27 տեղամասում հաշվարկի ժամանակ «Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ Կամո Սուրենի Դավթյանը դիտարկել է Ամփոփման կարգի խախտում 12 անգամ. հանձնաժողովի նախագահը տարբեր պատճառաբանություններով 12 անգամ ընդհատեց հաշվարկման կարգը՝ քվեատուփը թողնելով բաց: Քվեաթերթիկների ոչ բարձրաձայն էին ընթերցում հանձնաժողովի նախագահի կողմից: Քվեարկության արդյունքները կեղծվել են քվեաթերթիկների ավելացման միջոցով: Հասկանալով, որ 8/27-ում «ՈՉ»-ի օգտին քվեաթերթիկները գերազանցում են «այո»-ի քվեները, իսկ մյուս երկու ընտրատեղամասերում (8/28, 8/29), որտեղ չկային դիտորդներ, լցոնումների շնորհիվ հաղթել է «այո»-ն՝ հանձնաժողովի նախագահը վայրկենական «այո»-ի քվեաթերթիկներն իջեցրեց սեղանի տակ ու հանեց արդեն ավելացված քվեաթերթիկներով տրցակը: Մինչ մենք մեր ուշադրությունը սևեռեցինք տվյալ

կեղծիքի վրա, հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամի ձեռքից խլեց «ոչ»-ի օգտին գրանցված քվեաթերթիկներն ու մտցրեց բաճկոնի մեջ: Հանելուց հետո քվեաթերթիկներն արդեն պակասել էին:

Թիվ 9 ընտրատարածք

93. Թիվ 9/1 տեղամասում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Մուրադ Վարձելյանը նկատել է, որ պարբերաբար 15-ից ավելի քվեարկողներ են եղել քվեարկության սենյակում, ինչի արդյունքում սահմանափակվել է քվեարկության գործընթացը լիարժեք վերահսկելու դիտորդների և լրագրողների հնարավորությունը, հանձնաժողովի նախագահը որևէ քայլ չի կատարել կուտակումները վերացնելու համար, ինչպես նաև չի արձանագրել խախտումը գրանցամատյանում (կցվում են լուսանկարները՝ ըստ տեղամասի)
94. Թիվ 9/1 տեղամասում Asparez.am լրատվական կայքի լրագրող Մուրադ Վարձելյանը նկատել է, որ նույն անձը երեք անգամ տարբեր անձանց հետ մտնում է քվեասենյակ՝ քվեարկության բերելով և ուղղորդելով նրանց: Դիտորդի այն հարցին, թե ով է և ինչ իրավունքով է մտնում, հանձնաժողովի նախագահն ասել է վստահված անձ է, սակայն տվյալ անձը վստահված անձի վկայական չի ունեցել, և նախագահը չի արձանագրել այս դեպքը գրանցամատյանում:
95. Թիվ 9/1 տեղամասում Asparez.am լրատվական կայքի ներկայացուցիչ Մուրադ Վարձելյանը դիտարկել է առավոտյան նիստին հանձնաժողովի անդամների հերթափոխի հերթականության մասին վիճակահանության արդյունքների փոփոխում օրվա ընթացքում: Դիտորդը տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին արձանագրելու համար, սակայն մերժել են գրանցամատյանում գրանցել, պատժառաբանելով, որ մանր բաներ են պահանջում (կցվում են տեսաձայնագրությունը և լուսանկարները՝ ըստ տեղամասի):
96. Թիվ 9/13 տեղամասում Asparez.am լրատվական կայքի լրագրող Լևոն Հարոյանը դիտարկել է, որ ժամը 15:55-ի սահմաններում տեղի են ունեցել կուտակումներ քվեարկության սենյակում հիմնականում այն ժամանակ, երբ քվեատուփի մոտ նստած է եղել հանձնաժողովի ՀՀԿ անդամը: ինչի արդյունքում սահմանափակվել է քվեարկության գործընթացը լիարժեք վերահսկելու դիտորդների և լրագրողների հնարավորությունը: Կուտակումների մասին դիտորդը տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին, վերացնելու և արձանագրելու, սակայն հանձնաժողովի նախագահը մերժել է գրանցումը գրանցամատյանում:
97. Թիվ 9/13 տեղամասում Asparez.am լրատվական կայքի լրագրող Լևոն Հարոյանը ժամը 15:55-ի սահմաններում դրսում մեքենաների կուտակումներ է տեսել, տաքսիներով կազմակերպված մարդկանց տեղափոխել են տեղամաս: Կուտակումները չեն վերացվել և չեն գրանցվել գրանցամատյանում:
98. Թիվ 9/14 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Արինա Զոհրաբյանը նկատել է, որ հանձնաժողովի անդամն առանց քվեարկողի ներկայության լրացուցիչ կնիքներ է

դնում քվեարկողների ցուցակներում, դիտորդը հանձնաժողովի նախագահի ուշադրությունն է հրավիրել, նախագահն ու քարտուղարը ասել են, որ նման բան չանեն, բայց արձանագրություն չեն կազմել:

99. Թիվ 9/16 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Վարդգես Գասպարին դիտարկել է, թե ինչպես այլ շրջանի բնակիչը տեղեկանքով էր քվեարկում, երբ դիտորդը ճշտում էր անձնագիրը, գրանցման հասցեն, նախագահի ուղղորդմամբ քվեարկողին հեռացրել են դիտորդից: Տվյալ անձի քվերակությունը ավարտելուց հետո դիտորդը փորձել է շարունակել տվյալների ճշտումը, նախագահը քվեարկած անձին ասել է, որ քվեարկել է և կարող է լքել տարածքը: Այդպես էլ դիտորդին հասանելի չի դարձվել անձի փաստաթղթի և գրանցման ճշտությունը ստուգել: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:

100. Թիվ 9/16 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Վարդգես Գասպարին ականատեսն է եղել քվեարկողների ուղորդման և տեղամասում կողմնակի՝ առանց վկայականի, անձանց ներկայության դեպքով կազմել է արձանագրություն, որին հանձնաժողովը հրաժարվել է ընթացք տալ և խախտումը որևէ կերպ չի արձանագրել գրանցամատյանում:

101. Թիվ 9/16 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Վարդգես Գասպարին նկատել է կուտակումներ ընտրատեղամասի մուտքի մոտ և թե ինչպես են ուղորդում «զազելից» իջնող մարդկանց: Ուղղորդման փաստը տեսագրված է, դրա վերաբերյալ հանձնաժողովի նախագահին տեղեկացրել է դիտորդը, որպեսզի քայլեր ձեռնարկի կուտակումները վերացնելու և քվեարկության գործընթացի լիարժեք դիտարկման հնարավորությունը վերականգնելու և արձանագրի, սակայն հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրելուց:

102. Թիվ 9/16 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Վարդգես Գասպարին ժամը 8:35-ից սկսած նկատել է, որ քաղաքացի Ժենյա Սարգսյանը (կողմնակի անձ, որևէ կարգավիճակով ներգրավված չէ տեղամասի աշխատանքներին) պարբերաբար ընտրողներ է ուղղորդում տեղամաս, որի վերաբերյալ հանձնաժողովի նախագահին տեղեկացրել է, սակայն քայլեր չի ձեռնարկել և չի արձանագրել այդ փաստը:

103. Թիվ 9/16 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Վարդգես Գասպարին ժամը 14:16-ի սահմաններում կուտակումներ է նկատել տեղամասի մուտքի մոտ: Դիտորդի կողմից կուտակումները տեսագրելու ժամանակ անհայտ անձինք հայհոյել և սպառնացել են նրան: Հանձնաժողովի նախագահին տեղյակ է պահել դեպքի մասին, սակայն չի արձանագրվել այդ ամենը:

104. Թիվ 9/17 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Գոհար Մամիկոնյանը դիտարկել է, թե ինչպես է քաղաքացին եկել և տեսել որ իր փոխարեն արդեն քվերակել են, պահանջել է իր քվերակության իրավունքը վերականգնել: Հանձնաժողովի նախագահը սկզբում հրաժարվել է գրանցել գրանցամատյանում, սակայն հետո արձանագրել է, իսկ քաղաքացուն թույլ չի տրվել քվեարկել:

105. 9/17 տեղամաս. ԻԵՄ ՀԿ դիտորդ՝ Գոհար Մամիկոնյանը արձանագրել է, որ ժամը 18:07 Տիգրան Մելիքյան անունով քաղաքացին նույնպես, գալով քվեարկության, հայտնաբերել է, որ իր փոխարեն ևս արդեն ստորագրել (քվեարկել) են: *Առկա է գրառում գրանցամատյանում:*

106. Թիվ 9/17 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Գոհար Մամիկոնյանը դիտարկել է, որ անձը ստորագրում է ուրիշի փոխարեն: Տվյալ անձը մոտեցել է ցուցակի մոտ նստած հանձնաժողովի անդամին, ինչ որ հասցե է հայտնել, որպեսզի վերջինս ստուգի, հանձնաժողովի անդամը նայել է հասցեն, սակայն անձնագրի նկարի միջոցով չի նույնականացրել այդ անձին, այլ ստուգել է միայն հասցեն: Դիտրոդն ասել է, որ ստուգի անձի ինքնությունը ու անձնագիրը ցույց տրվի, քանի որ նկատել է որ ներկայացված անձնագիրն այլ անձի լուսանկարով է, բայց արդեն այդ անձը ստորագրել էր ուրիշի փոխարեն: Դիտորդին արգելել են մոտենալ ընտրացուցակին, վստահված անձանցից մեկը պարբերաբար լարված մթնոլորտ է ստեղծել: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում:

107. Թիվ 9/17 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Գոհար Մամիկոնյանը դիտարկել է, որ Հանձնաժողովի նախագահի կնիքը 14:03-ի սահմաններում հայտնվել է հանձնաժողովի անդամ Սոնայի մոտ, իսկ Սոնայի կնիքը հայտնվել է աղբամանում: Այդ մասին ԿԸՀ-ին տեղեկացրել են, որից հետո դադարեցրել են քվեարկությունը, որպեսզի կնիքը գտնեն, որից հետո կորած կնիքը գտել են աղբամանից: Նշված փաստը չի արձանագրվել: (միջադեպին ներկա են եղել լրագրողներ 168.am-ից, news.am-ից, Հ3-ից)

108. Թիվ 9/17 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Գոհար Մամիկոնյանը դիտարկել է, որ քաղաքացին (կին) եկել էր քվեարկության, սակայն պարզվեց, որ իր փոխարեն քվեարկել են, քաղաքացուն դուրս հրավիրեցին ընտրատեղամասից՝ չտալով քվեարկելու հնարավորություն: Դիտորդը պնդել է, որ նախագահը արձանագրի, իսկ նախագահը պատասխանել է, որ քաղաքացին հեռացավ ու արձանագրելու կարիք չկա:

109. Թիվ 9/23 տեղամասում Պաուլա Դեր Նայորա անունով Asparez.am կայքի լրագրողը դիտարկել է, որ հանձնաժողովի անդամները ժամը 19:23-ի սահմաններում բղավել են դիտորդներից մեկի վրա, և թույլ չեն տվել «Քաղաքացի Դիտորդ» նախաձեռնության համակարգող կենտրոնի օպերատորին փոխանցել տեղեկատվությունը, այնուհետև այդ անդամներից մեկը խոսել է համակարգող կենտրոնի օպերատորի հետ և առանց ներկայանալու ասել, որ անձն անգլերեն իրավունք չունի խոսել, իրենց պարզ չէ, թե ինչ տեղեկատվություն են փոխանցում: հանձնաժողովի անդամին պահանջել է ներկայացվել ներկայանալ և այնտեղ հարցերը քննարկել, հանձնաժողովի անդամը չի ցանկացել շարունակել խոսակցությունը և անջատել է հեռախոսը (կցվում է տեսաձայնագրությունն ու լուսանկարը՝ ըստ տեղամասի):

110. Թիվ 9/27 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Վիկտորիա Այդինյանը նկատել է, որ ընտրողների ցուցակում նույնանման ստորագրություններ են առկա և որ դրանք դնում է հանձնաժողովի անդամը, դիտորդի այն հարցին թե ինչ է անում հանձնաժողովի անդամը, ինչու է ստորագրում քվեարկողների ցուցակներում, պատասխանել է, որ չի հասցրել, դրա համար հիմա է ստորագրում: Հանձնաժողովի նախագահը հրաժարվում է գրանցել խախտումը գրանցամատյանում:

111. Թիվ 9/27 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Վիկտորիա Այդինյան 18:59-ի սահմաններում դիտարկել է, որ թաղային հեղինակություններից մեկը Ռուբեն Սիմոնյան/Ոսկանյան՝ հայտնի «Բոգո» մականունով, պարբերաբար մտնում է ընտրատեղամաս, նախագահը չի կարողանում վերահսկել իրավիճակը, դիտորդը նշում է, որ ընտրողների ցուցակներում արդեն տեսել են կրկնվող ստորագրությամբ էջեր լրացված, պդել են, որ կազմվի արձանագրություն, հանձնաժողովի նախագահը ասել է, կարձանագրի, սակայն չի արձանագրել: ՀՀԿ-ի վստահված անձը հետապնդում է դիտորդին և հոգեբանական ճնշումներ է գործադրում: Այս դեպքը ևս չի արձնագրվել գրանցամատյանում:

112. Թիվ 9/27 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Վիկտորիա Այդինյանը 18:53-ի սահմաններում լցոնումն արդեն տեղի է ունեցել, դիտորդներին և լրագրողներին մի խումբ ընտրատեղամաս մտած անձինք ահաբեկել են և սահմանափակու են նրանց անարգել դիտարկելու իրավունքը, հանձնաժողովի նախագահը բղավում է, ոչինչ չի ուզում անի, պնդում է, որ ոչ մի բան չի եղել: Այս դեպքը ևս չի արձնագրվել գրանցամատյանում:

113. Թիվ 9/27 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Վիկտորիա Այդինյանն, Asparez.am կայքի ներկայացուցիչ Մկրտչյան Անուշիկը 19:00-ի սահմաններում ենթարկվել են ահաբեկման և ճնշումների: Հանձնաժողովը անգործության է մատնված: Ակնհայտ վտանգի պատճառով դիտորդները լքել են տեղամասը: Այս դեպքը ևս չի արձնագրվել գրանցամատյանում:

114. Թիվ 9/23 տեղամասում Պաուլա Դեր Նայորա Asparez.am կայքի լրագրողը դիտարկել է, թե ինչպես է հանձնաժողովի անդամը հանձնաժողովի կնիքը դուրս է հանել տեղամասից միջանցք՝ 2 անգամ: Նույն դեպքը Կատարվել է նաև երրորդ անգամ և դիտորդը տեսանկարահանել դա: Այս դեպքը ևս չի արձնագրվել գրանցամատյանում:

115. Թիվ 9/28 տեղամասում Էլիզաբեթ Մաքֆադեն անունով Asparez.am կայքի լրագրողը երկու անգամ նկատել է մարդկանց ու մեքենաների կուտակումներ և այդ ժամանակահատվածում նաև կուտակումներ և խառնաշփոթ քվեարկության սենյակում, առաջին անգամ հանձնաժողովի նախագահին ասել է, որ միգուցե վստահված անձինք են կուտակվել, բայց թիվը չափազանց մեծ է եղել: Որոշ ժամանակ անց կուտակումները վերացել են, սակայն այդ ժամանակահատվածում քվեարկության գործընթացը դիտարկելու հնարավորությունը սահմանափակված է եղել: Հանձնաժողովի նախագահը չի արձանագրել դեպքերը գրանցամատյանում:

116. Թիվ 9/28 տեղամասում Էլիզաբեթ Մաքֆադեն անունով Asparez.am կայքի լրագրողը 6:10-6:40-ի սահմաններում դիտարկել է, որ հանձնաժողովի քարտուղարը վերցրել է քվերաթերթիկը, քվերակել է ու գցել քվեատուփի մեջ հենց այն ժամանակ, երբ իրարանցում է եղել: Այս դեպքը ևս չի արձնագրվել գրանցամատյանում:

Թիվ 10 ընտրատարածք

117. Թիվ 10/2 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Գոհար Քամալյանը դիտարկել է, որ տեսանկարահանող տեսախցիկներ են տեղադրված քվեատուփերի վրա, հանձնաժողովի նախագահ Հակոբյան Հակոբը, ում հետ խոսել է դիտորդը, խոսել է նաև «Քաղաքացի դիտորդ» համակարգման կենտրոնի օպերատորը պնդել է, որ քվեատուփերը տեղափոխել չի կարող, ինչպես նաև պնդում է, որ տեսախցիկները անջատված են, սակայն այլ գործողություններ չի կատարել՝ ճշտելու թե արդյոք այդ տեսախցիկների դիտարկում իրականացվում է թե ոչ, կամ ում կողմից են դրանք տեղադրված, եղել են արդյոք մինչև քվեարկությունը, հանձնաժողովի նախագահը շենքի տնօրինության հետ կապ չի հաստատել: Դրա վերաբերյալ արձանագրություն չեն կազմել և քվեարկությունը ողջ օրվա ընթացքում իրականացվել է այդ տեսախցիկների տեսադաշտում: /առկա են լուսանկարներ/

118. Թիվ 10/4 տեղամասում Գայանե Հակոբյան անունով Ասպարեզ օրաթերթի լրագրողը ժամը 12:10-ի սահմաններում դիտարկել է, որ մեքենաներով մարդկանց փոխադրել են տեղամաս, եղել են կուտակումներ, նախագահին ահազանգել են, հրավիրվել է ոստիկանություն, սակայն այլ ընթացք չի եղել:

119. Թիվ 10/8 216 Նույն մարդուն երկրորդ անգամ քվերակելիս ճանաչել են լրատվամիջոցի ներկայացուցիչները, մոտեցել են նկարահանելու, փախել է երկրորդ դիտորդն էլ է դա արձանագրել է: դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում:

120. Թիվ 10/8 տեղամասում ժամը 14:00-ի դրությամբ ընտրողների ցուցակում եղել է 130 ստորագրություն, սակայն տրվել է 150 քվեաթերթիկ: դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում:

121. Թիվ 10/15 տեղամաս: Ընտրողից ահազանգ է ստացվել, որ 10/15 տեղամասում ընտրացուցակում ստորագրելիս նկատել է, որ հանրապետությունից այս պահին բացակա իր եղբոր և նրա կնոջ անվան դիմաց ցուցակում ստորագրված է: Այդ մասին տեղեկացրել է հանձնաժողովին, բարձրաձայնել է, սակայն նրա խոսքերին ուշադրություն չեն դարձրել, դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում::

122. Թիվ 10/20 տեղամասում Իսանյանս Դվին անունով Asparez.am կայքի լրագրողը նկատել է, որ ընտրատեղամասում կրկնաքվեարկություն է եղել, տեղամասի նախագահը տեղյակ է, բայց արձանագրություն չի կազմվել: Կոտրել են ilur.am կայքի լրագրողի տեսախցիկը, ու քրեական գործ է հարուցվել, լրագրողին և վստահված անձանցից մեկին տարել են ոստիկանություն: Դավիթ Սիմոնյան

անունով հհկ-ի վստահված անձը, կոտրել է ilur.am-i տեսախցիկը, լրագրողի ազգանունը՝ Ռաֆայել Աֆրիկյան է: դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում (կցվում է տեսաձայնագրությունն՝ ըստ տեղամասի):

123. Թիվ 10/20 տեղամասում Asparez.am կայքի ներկայացուցիչ Դվին Իսայանսն ահազանգել է այն մասին, որ 10/20 տեղամասում պարբերաբար եղել են 15-ից ավելի ընտրողներ, սահմանափակվել է քվեարկության գործընթացը վերահսկելու հնարավորությունը կուտակումների պատճառով, խառնաշփոթ է եղել: ՀՀԿ խմբակցության վստահված անձը բերել և ուղեկցել է ընտրողներին, նախորոք տեղյակ է եղել նրանց հերթական համարներին: դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում (կցվում է տեսաձայնագրությունն՝ ըստ տեղամասի):

124. Թիվ 10/20 տեղամասում Asparez.am կայքի ներկայացուցիչ Դվին Իսայանսը և Ասպարեզ օրաթերթի ներկայացուցիչ Խաչատրյան Աշոտը դիտարկել են, որ նկատել է նույն անձը երկրորդ անգամ է քվերակում և ճանաչել են, ներկայացուցիչը մոտեցել է նկարահանելու, փախել է երկրորդ դիտորդն էլ է դա արձանագրել: դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում(կցվում է տեսաձայնագրությունն՝ ըստ տեղամասի):

125. Թիվ 10/20 տեղամասում Asparez.am կայքի ներկայացուցիչ Իսանյանս Դվինը դիտարկել է, որ ժամը 12:40-ի սահմաններում ընտրատեղամասում թեժ կռիվ էր և բղավոցներ, Կոտայքի մարզից բերվել էին ընտրողներ լրացուցիչ ցանկերով քվերակելու համար: Տեղամասում էր նաև Զարուհի Փոստանջյանը: դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում (կցվում է տեսաձայնագրությունն՝ ըստ տեղամասի):

Թիվ 11 ընտրատարածք

126. Թիվ 11/14 տեղամասում ԹԻՀԿ-ի դիտորդ Վանյան Գարիկն արձանագրել է, Մարինե Հովակիմյանի փոխարեն ստորագրված է եղել ընտրողների ցուցակում (քվեարկած է եղել մայրը), երբ նա եկել է քվեարկության: Իրեն առաջարկել են քվեարկել իր մոր փոխարեն՝ վերջինիս տեղամաս ներկայանալուց հետո: Սակայն Մ. Հովակիմյանը հրաժարվել է մասնակցել քվեարկությանը:

127. Թիվ 11/11 տեղամասում Գեորգի Մաչարաշվիլի անունով Asparez.am կայքի լրագրողը նկատել է, որ ըստ հանձնաժողովի անդամների Մարգարիտա Արայիկի Մկրտչյանը քվերակել է, բայց մոռացել է ստորագրել ցուցակում: Ներկայացուցիչը դա արձանագրել է ընդմիջումից գալուց հետո, այդ ժամանակ են բացատրել և այդ ընթացքում հանձնաժողովի անդամը ցուցակում ավելացրել է իր կնիքը, հիմա պարզ չէ, թե արդյոք իրականում այդ անձը ընտրել է, թե ոչ, այդ ուղղությամբ հանձնաժողովի նախագահը ոչ մի գործողություն չի ձեռնարկել, այս դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում:

128. Թիվ 11/12 տեղամասում պարբերաբար արձանագրվել է, երբ Հանձնաժողովի անդամը չի դնում դրոշմակնիքը քվեարկողների անձնագրերում, իսկ մի դեպքում դրոշմակնիքը դրել է անձնագրի պլաստիկ պաշտպանիչ ծածկի վրա:

129. Թիվ 11/21 տեղամասում Լառա Ահարոնյան անունով Asparez.am կայքի լրագրողի հեռախոսը ցանկանում էր կոտրել այն քվեարկողը, ում նկարահանում էր լրագրողը: *Քվեարկողի լուսանկարն առկա է*: Ոստիկանությունն այդ անձին հրավիրել է հետաքննության, նաև կանչել է Լ. Ահարոնյանին, վերջինս հրաժարվել է լքել տեղամասը: Նախագահին հրավիրել են հեռախոսը կոտրելու փորձ կատարած անձի հետ, հավանաբար ոստիկանությունը պարզել է այդ անձի ինքնությունը: Հանձնաժողովի նախագահը ներկայացունցչի խորհուրդ է տվել այլևս չտեսագրել մարդկանց: Այս դեպքը ևս չի արձանագրվել գրանցամատյանում (կցվում է տեսաձայնագրությունն ու լուսանկարը՝ ըստ տեղամասի):

130. Թիվ 11/22 տեղամասում Asparez լրատվական կայքի ներկայացուցիչ Քել Քաջարյանը արձանագրել է, որ հանձնաժողովի նախագահն ու երկու մյուս անդամները, որոնցից մեկը՝ քարտուղարը 16:53-ի սահմաններում պարբերաբար դուրս են գալիս ընտրատեղամասից, ինչը փոխկապակցված էր ընտացուցակներում փաստացի քվերակածների ընդհանուր թիվը ճշտելու հետ, դիտորդը ահազանգել է, հանձնաժողովի նախագահն ասել է, որ չկա ոչ մի օրենսդրական նորմ, որով ինքը, իր ու մյուս անդամների դուրս գալն արձանագրի: Այս դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում:

131. Թիվ 11/25 տեղամասում Asparez.am կայքի լրագրողը հայտնել է, որ 10:25-ի սահմաններում տեղամասի մոտ վստահված անձը / դիտորդը փորձել է ճշտել ինքնությունը/ ակնհայտ «Այո»-ի քարոզչություն է անում: Դիտորդը փորձել է ճշտել այդ անձի ինքնությունը Հիշյալ դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում և այդ կապակցությամբ հանձնաժողովի նախագահը ոչ մի գործողություն չի ձեռնարկել:

132. Թիվ 11/35 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Անուշ Մարգարյանը հայտնել է, որ քվեարկող՝ Ապերյան Զոյան 12:44-ի սահմաններում եկել է քվեարկության, սակայն իր փոխարեն արդեն քվեարկած են եղել: Հանձնաժողովի նախագահի կողմից խախտումն արձանագրվել է գրանցամատյանում: Քաղաքացին չի մասնակցել քվեարկությանը:

133. Թիվ 11/35 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Անուշ Մարգարյանը հայտնել է, որ 20:07-ի սահմաններում տեղի է ունեցել քվեատուփի լցոնում՝ շուրջ 100 քվեարկության ծրարներով, իսկ ընտրատեղամասի փակումից հետո հանձնաժողովի անդամները փորձել են լրացնել ընտրողների ստորագրած ցուցակները՝ մասնակիցների թիվը լցոնված քվեաթերթիկներին համապատասխանեցնելու նպատակով: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:

134. Թիվ 11/35 տեղամասում ԻԵՄ-ի դիտորդ Անուշ Մարգարյանը դիտարկել է, որ հաշվարկը սկսվել է **մեկ ժամ** ուշացումով: Տեղամասի փակվելուց հետո հանձնաժողովի անդամները փորձել են ստորագրություններ դնել մատյանում: Այս

դեպքերը ևս չեն արձանագրվել գրանցամատյանում: Ընտրողների ստորագրված ցուցակներում քվեարկության մասնակիցների իրական թիվը չի համապատասխանել քվեատուփում առկա քվեաթերթիկների թվին:

135. Թիվ 11/22 հանրաքվեի տեղամասում ժամը 03:00-ի սահմաններում Asparez.am լրատվական կայքի լրագրող Քել Քաջարյան Հովիկ Մանուելի կողմից արձանագրվել է հանձնաժողովի կողմից քվարկության ավարտից հետո քվեարկության արդյունքների հաշվարկի ժամանակ կազմվել է արձանագրություն, որի համաձայն արձանագրվել են հետևյալ արդյունքները. «Ոչ»՝ 526 քվեաթերթիկ, «Այո»՝ 126 քվեաթերթիկ: Արձանագրության օրինակը տրամադրվել է դիտորդներին և վստահված անձանց ինչպես նաև այլ իրավունք ունեցող անձանց: Սակայն հրապարակվել են ճիշտ հակառակ արդյունքները: Մասնավորապես նշվել է հետևյալ . «Այո»՝ 526 քվեաթերթիկ, «Ոչ» 126 քվեաթերթիկ: Հանձնաժողովի անդամներից մեկի հատուկ կարծիքը չի արձանագրվել արձանագրությունում: /առկա է սկզբնական արձանագրության լուսանկարը/:

Այնուհետև 8.12.2015թ. ժամը 17:00-ի սահմաններում ՀԱԿ հանձնաժողովի անդամի կողմից ներկայացվել է դիմում/բողոք թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին թիվ 11/22 տեղամասային հանձնաժողովի գործողությունների կապակցությամբ, որով պահանջվել է կատարել վերահաշվարկ այդ տեղամասում: Սակայն վերոնշյալի մասին վերջինի դիմում-բողոքը ընտրատարածքային հանձնաժողովի նախագահը չի ընդունել:

Թիվ 19 ընտրատարածք

136. Թիվ 19/20 ԻԵՄ-ի դիտորդ Արշակյան Արման: Տեղամասում եղել են կուտակումներ զորամասի քվեարկության հետ կապված, սակայն ըստ դիտորդի ոչ մի ուրիշ խախտում չի կատարվել:

137. Թիվ 19/20 Asparez.am լրատվական կայքի լրագրող Մուրադյան Աննա: Պարբերաբար շեղում էին ընտրատարածքում ծանոթ անձիք: Բանը հասել էր նրան, որ 17:00-ի սահմաններում փոխվել է ընտրատարածքը 19/6-ի: Ուրիշ ոչ մի խնդիրների մասին չի տեղեկացրել:

Թիվ 21 ընտրատարածք

138. Թիվ 21/14 Asparez.am լրատվական կայքի լրագրող Մուսայելյան Սոնա: Նկատել է նույն անձնագրի փոխանցումը միմյանց: Երբ այդ անձիք տեսնում էին, որ դիտորդը հետևում է կամ փորձում նկարահանել, գործընթացը դադարեցվում էր: Դիտորդի հարցերին պատասխանում էին, որ «սխալմունք է»:

Թիվ 25 ընտրատարածք

139. Թիվ 25/1 ընտրատեղամասում ժամը 13:44 սահմաններում Asparez.am լրատվական կայքի լրագրող Շուշան Նավասարդյանի կողմից նկատվել է

հանձնաժողովի անդամների կուտակումը ընտրատեղամասի նախագահի սեղանի մոտ և միաժամանակ բազմաթիվ լցոնումներ: Ժամը 14:05 սահմաններում նույն լրագրողը հայտնել է տեղամասում կուտակումների և կողմնակի՝ վկայական չունեցող անձանց ներկայությունը: Հանձնաժողովի նախագահը չի արձանագրել վերոնշյալ դեպքերը և փորձել է ամեն կերպ խոչընդոտել դիտորդի աշխատանքը:

140. Թիվ 25/2 ընտրատեղամասում դիտորդներ Սիմոնյան Սուզաննաի և Արսենյան Արսենի կողմից առավոտյան ժամը 7:30 սահմաններում ստացվել է տեղեկություն սայլակով տեղաշարժվողների համար ընտրատարածքի անհասանելիության մասին: Նույն դիտորդները օրվա ընթացքում՝ պարբերաբար, արձանագրել են մարդկային կուտակումներ տեղամասի ներսում, կողմնակի՝ վկայական չունեցող, անձանց ներկայությունը, քվեարկությունը խոչընդոտող կողմնակի անձանց մեկից ավելի անգամ ներկայությունը ընտրատեղամասում: Հանձնաժողովի նախագահը որևիցե գործողություններ չի կազմակերպել վերոնշյալ թերությունները շտկելու կամ արձանագրելու համար:

141. Թիվ 25/10 ընտրատեղամասում օրվա ընթացքում Տնտեսական Զարգացման եւ Հետազոտությունների Կենտրոնի դիտորդ Արթուր Բարսեղյանի կողմից բազմիցս նկատվել են 15 հոգուծ ավելի կուտակումներ ընտրատեղամասում, ինչպես նաև արձանագրվել է ընտրատեղամասի անմատչելիությունը սայլակով տեղաշարժվողների համար:

142. Թիվ 25/21 ընտրատեղամասում Տնտեսական Զարգացման եւ Հետազոտությունների Կենտրոնի դիտորդ Կարեն Ղարիբյանը բազմիցս նկատել է լցոնումներ, սակայն հանձնաժողովի անդամները փորձել են ամեն կերպ շեղել նրա ուշադրությունը և ոչ մի կերպ չէին արձագանքում կամ արձանագրում դիտորդի կողմից տրված ցուցումները:

143. Թիվ 25/29 ընտրատեղամասը բացվել է ժամը 8:00-ից ավելի ուշ: Ժամը 08:15 սահմաններում արձանագրվել է անձնագրում դրվող կնիքների հետ կապված խնդիրներ: Նույն տեղամասի դիտորդ Լիլիթ Թադևոսյանը հայտնել է նաև ժամը 12:00-ի սահմաններում ավելի քան 15 ընտրողների ընտրատեղամասում ներկայության մասին:

Թիվ 28 ընտրատարածք

144. Թիվ 28/16 ընտրատեղամասի Տնտեսական Զարգացման եւ Հետազոտությունների Կենտրոնի դիտորդ Մակվեցյան Լիանան հայտնել է օրվա ընթացքում բազմաթիվ լցոնումների, ինչպես նաև տարբեր ժամերին կողմնակի անձանց ընտրատեղամաս կրկնակի մուտք գործելու մասին:

Թիվ 29 ընտրատարածք

145. Թիվ 29/21 տեղամասում կատարվել է բազմակի քվեարկություն տեղամասից(Լոռու մարզ, գյուղ Լեռնապատ), որոնք դիտարկել է դիտորդ Նազելի Մովսիսյանը. բազմաթիվ հաշմանդամների կամ անառողջների համար քվեաթերթիկը հանձնաժողովի նախագահի և վստահված անձի կողմից տարվել է տեղամասից դուրս, այն լրացվել է մեքենայի մեջ կամ այլ տեղ, այնուհետև

քվեաթերթիկը բերվել և գցվել է արկղի մեջ: Բոլոր դեպքերում էլ գրանցամատյանում գրանցումներ չեն կատարվել:

146. Թիվ 29/21 տեղամասում դիտորդ Նազելի Մովսիսյանը դիտարկել է ինչպես հանձնաժողովի անդամներից մեկը քվեարկության գրեթե ողջ ընթացքում քվեարկության խցիկի մոտ կանգնած հետևել է, թե ինչպես են քվեարկում քաղաքացիները, որով խախտել է քվեարկության գաղտնիությունը: Այս դեպքը չի արձանագրվել գրանցամատյանում: Նազելի Մովսիսյանը

147. Թիվ 29/21 տեղամասում մի խումբ երիտասարդներ /շուրջ 15 մարդ/ մի քանի անգամ փորձեր են կատարել լցոնում կատարել: Այդ մասին հայտնել է դիտորդ Նազելի Մովսիսյանը: Փորձերից մեկի ժամանակ նրանցից մի քանիսին հաջողվել է քվեատուփի լցոնում կատարել: Խմբի անդամներին հեռացրել են տեղամասից և կազմվել է համապատասխան արձանագրություն:

148. Թիվ 29/08 տեղամասում առկա են եղել քարոզչական նյութեր. բոլորի համար տեսանելի վայրում. փակցված է եղել Սերժ Սարգսյանի նկարը: Այս փաստը արձանագրել է դիտորդ Չատինյան Բավականը:

Թիվ 33 ընտրատարածք

149. Թիվ 33/77 տեղամասում ժամը 13:33 դիտորդ Էմմա Սարգսյանի կողմից նկատվել է մարդկանց և մեքենաների կուտակումներ տեղամասից 50 մետր շառավղի շրջանակներում: Դիտորդի պահանջը ուղղված հանձնաժողովի նախագահին՝ խախտումները վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ մնացել է անհետևանք:

150. Թիվ 33/75 տեղամասում ժամը 14:05 «Իրավունքի Եվրոպա միավորում» ԻՀԿ դիտորդ Աշոտ Հակոբյանին առաջարկվել է **կաշառք՝** խախտումների վրա աչք փակելու պայմանով, որից առաջացել է վիճաբանություն, ավելին, դիտորդն ականատես է եղել ընտրակաշառքի մի շարք դեպքերի: Այս ամենը չի արձանագրվել գրանցամատյանում:

151. Թիվ 33/69 տեղամասում ժամը 15:39 հանձնաժողովի քարտուղարը փորձել է լցոնում կատարել, «Թրանսպարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Մանվել Հարությունի Կարապետյանը տեսել է, որից հետո քարտուղարը հեռացել է տեղամասից: Հանձնաժողովի նախագահը փորձել է բանակցել դիտորդի հետ՝ դեպքը թաքցնելու նպատակով պայմանավորվածություն ձեռք բերելու համար, սակայն դիտորդը այս առաջարկը մերժել է: Ավելին, դիտորդը տրամադրել է տեսանյութ հանձնաժողովի անդամների կողմից քվեաթերթիկները սեղանի տակից հանելու և ծրարների և ցուցակների կնքում իրականացնելու վերաբերյալ: Դիտորդի առաջարկները խախտումները վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ՝ մերժվել են:

Թիվ 34 ընտրատարածք

152. Թիվ 34/7 տեղամաս 09:18 «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ՝ Աննա Ալբերտի Մելիքյանից ստացվել է տեղեկատվություն

այն մասին, որ հանձնաժողովի նախագահն արգելել է դիտորդին կատարել գրառումներ՝ խախտելով դիտորդի դիտորդական իրավունքները:

153. ***Թիվ 34/12 տեղամաս 07:34*** «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ՝Դավիթ Գեղամի Գրիգորյանից այն մասին, որ Ընտրատեղամասը կահավորված չէ օրենքի պահանջների համապատասխան, մասնավորապես՝ սեղանները դրված են եղել ետնապատին կից: Դիտորդի առաջարկը՝ խախտումը վերացնելու, հանձնաժողովի նախագահի կողմից մերժվել է պատճառաբանությամբ, որ տարածքը փոքր է: Արդյունքում, դիտորդը զրկվել է դիտորդական առաքելության արդյունավետ իրականացման համար քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելու իր իրավունքից, ավելին հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դիտորդի պահանջով խախտման կապակցությամբ գրանցամատյանում կատարելգրառում:

154. Թիվ 34/20 տեղամաս 14:50 «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոնկենտրոն» ՀԿ-ի դիտորդ Գայանե ՄխիթարիՄելքոնյանից ստացվել է հաղորդագրություն, որ ՀՀ քաղաքացին քվեարկության ժամանակ պարզել է, որ իր եղբոր՝ Աշոտ Ռաֆիկի Կարապետյանի փոխարեն արդեն քվեարկված է այն դեպքում, երբ եղբայրը չի բնակվում Հայաստանի Հանրապետությունում: Վերջինիս պահանջը խախտումը վերացնելու բավարարվել է, իս դիտորդի պահանջը՝ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ մերժվել: Իսկ ժամը՝ 09:55-ի սահմաններում դիտորդի կողմից բարձրաձայնվել է ընտրախախտում՝քաղաքացի Աշոտ Կարապետյանի անվան դիմաց կատարված լրացման վերաբերյալ, արդյունքում որևէ միջոց չի ձեռնակվել նածագահի կողմից, այդ թվում գրանցամատյանում փաստի գրառումը:

155. Թիվ 34/23 տեղամաս 10:48 «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ՝Վահե Ավետիքի Ղազարյանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ մի խումբ անձինք, ովքեր ներկայացել են որպես Հանրապետական և Բարգավաճ Հայաստան կուսակցությունների վստահված անձինք խմբերով մարդկանց են տեղափոխել տեղամաս՝ պատճառաբանելով, որ նրանք ծեր են և դժվար է վերջիններիս համար առանց օգնության տեղամաս հասնելը: Դեպքի կապակցությամբ դիտորդի կողմից հանձնաժողովի նախագահին առաջարկվել է ձեռնարկել միջոցներ՝ կանխելու խախտումները և գրանցամատյանում կատարել համապատասխան գրառումներ,առաջարկները թողնվել են անհետևանք:

156. *Թիվ 34/25 տեղամաս 15:45* «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ՝ Մերի Հովհաննեսի Հարությունյանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ Հանձնաժողովի նախագահը դիտորդին արգելել է ազատ տեղաշարժվել ընտրատեղամասում, իսկ մյուս դիտորդին հեռացրել է ընտրատեղամասից և հրաժարվել դեպքի կապակցությամբ գրառում կատարել գրանցամատյանում:

157. Թիվ 34/31 տեղամասում ժամը 14:24 թոռնուհին քվեարկել է տատիկի փոխարեն, խախտման վերաբերյալ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Շահնազարյան Լիլիթի առաջարկը՝ գրանցամատյանում գրառելու վերաբերյալ թողնվել է անհետևանք: Ավելին, ժամը 12:19-ի սահմաններում առավոտյան արդեն քվեարկած անձը քվեարկել է երկրորդ անգամ և դիտորդի առաջարկը՝ խախտումը վերացնելու և գրանցամատյանում

գրառում կատարելու վերաբերյալ հանձնաժողովի նախագահը ևս թողել է անհետևանք: *Առկա է տեսագրություն:*

158. Թիվ 34/28 տեղամասում ժամը 20:46 անորոշ պատճառներով չէր սկսվել քվեարկության արդյունքների ամփոփման նիստը և հաշվարկման գործընթացը: Այս մասին հայտնել է «Իրավունքի Եվրոպա միավորում» ԻՀԿ դիտորդ Ռոզա Աղայանը: Ավելին, մինչ տեղամասը փակելը քվեատուփի մոտ գտնվող հանձնաժողովի անդամից անհայտ անձը վերցրել է հանձնաժողովի նախագահի մոտ գտնվող անհատական կնիքը և հեռացել տեղամասից, որոշ ժամանակ անց կնիքը վերադարձվել է: Խախտման վերաբերյալ դիտորդի առաջարկը՝ միջոցներ ձեռնարկելու և գրանցամատյանում գրառելու մասին հանձնաժողովի նախագահի կողմից մերժվել է:

159. Թիվ 34/28 տեղամասում «Իրավունքի Եվրոպա միավորում» ԻՀԿ դիտորդ Ռոզա Աղայանը ժամը 20:40 սահմաններում արձանագրվել է քվեատուփի լցոնման մի քանի դեպք: *Առկա է տեսանյութ*: Բացի դրանից, խախտվել է հանձնաժողովի անդամների՝ ըստ վիճակահանության 2-ժամյա պարբերականությամբ հերթափոխի պահպանման վերաբերյալ օրենքի պահանջը՝ հերթափոխ տեղի չի ունեցել: Նախագահն անտեսել է դիտորդի պահանջը՝ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ:

Թիվ 35 ընտրատարածք

160. Թիվ 35/37 տեղամասում ժամը 16:45 անհայտ քաղաքացին ստորագրել է «Ցայգ» լրատվամիջոցի ներկայացուցչի փոխարեն և «Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Թերզյան Սայաթի առաջարկը՝ ուղղված հանձնաժողովի նախագահին խախտման վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու և գրանցամատյանում խախտումը գրառելու մասին թողնվել է անհետևանք:

161. Թիվ 35/29 տեղամասում ժամը 12:47 քաղաքացիները ներկայացել և գրանցվել են որպես Հանրապետական կուսակցության վստահված անձինք, սակայն չեն կրել վկայականներ: Նշված վստահված անձինք հիմնականում գտնվել են տեղամասից դուրս և պարբերաբար 3-5 հոգանոց խմբեր են ուղեկցել քվեարկության: «Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Հովհաննիսյան Գոհարի բարձրաձայնումը խախտումների վերաբերյալ հանձնաժողովի նախագահի կողմից թողնվել է անհետևանք, ավելին, անտեսվել է նաև առաջարկը՝ գրանցամատյանում խախտումները գրառելու մասին:

162. Թիվ 35/41 տեղամասում ժամը 13:06 սայլակով ընտրողին օգնող անձը վերջինիս հետ մտել է քվեարկության խցիկ՝ խախտելով քվեարկության գաղտնիությունը, արդյունքում տեղի է ունեցել բաց քվեարկություն: «Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Մալխասյան Ալբերտի կողմից հանձնաժողովի նախագահին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել խախտումը վերացնելու համար, սակայն ոչ միայն որևէ միջոց չի ձեռնարկվել, ավելին մերժվել է դիտորդի առաջարկը՝ գրանցամատյանում դեպքի վերաբերյալ գրառում կատարելը:

Թիվ 38 ընտրատարածք

163. Թիվ 38/1 տեղամաս «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ՝ Սոֆի Գրիգորյանից «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ դիտորդ՝ Հելենա Փարամազյանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ տեղամասում անհայտ քաղաքացին իրականացնում էր քարոզչական աշխատանքներ , որին ականատես էր նաև հանձնաժողովի նախագահը: Բազմաթիվ զգուշացումներից հետո քաղաքացուն տարածքից հեռացրել է: Հանձնաժողովի նախագահին առաջարկվել է գրանցել խախտումը, ով սակայն հրաժարվել է :

164. *Թիվ 38/2 տեղամա 14:50-ի «*Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ՝ Տիգրան Ավանեսյանից և «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ դիտորդ՝ Սվետլաննա Գրիգորյանից թիվ ՀՀ Սյունիքի մարզի հանձնաժողովի անդամ Սուրիկ Հարությունյանը քվեարկողների նկատմամբ իրականացրել է ուղղորդող գործունեություն: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դեպքի վերաբերյալ գրառում կատարել գրանցամատյանում:

165. *Թիվ 38/5 տեղամաս* «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ՝ Աննա Գրիգորյանից և «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ դիտորդ՝ Մելինե Ասծատուրյանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ հանձնաժողովի անդամ ոմն Անահիտը անվայել պահվածքի /հայհոյանքներ, սպառնալիքներ դիտորդների հասցեներին/ արդյունքում տևական ժամանակ անհնարին է դարձել դիտորդների դիտորդական գործունեության իրականացումը: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դեպքի վերաբերյալ գրառում կատարել գրանցամատյանում:

166. *Թիվ 38/8 տեղամաս 12:03* «Իրավունքի Եվրոպա Միավորում» հասարակական կազմակերպության ՀԿ դիտորդ՝Դավիդյան Հասմիկ և<<Ժուռնալիստների <<Ասպարեզ >> ակումբ ՀԿ լրագրող՝ Արաքսյա Սարգսյանից Հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է դիտորդներին իրականացնելու ազատ դիտորդական գործունեություն, մասնավորապես չի թույլատրել որևէ մեկին իրականացնելու դիտարկում ընտրացուցակների վերաբերելի աշխատանքները: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դեպքի վերաբերյալ գրառում կատարել գրանցամատյանում:

Թիվ 39 ընտրատարածք

167. Թիվ 39/ 32 տեղամաս 16:40 «Asparez.am» կայքի լրագրող՝ Վան Միքայելյանից և «Իրավունքի Եվրոպա Միավորում» ՀԿ դիտորդ՝ Արմինե Հարությունյանից տեղամասում շրջիկ դիտորդ՝Սիլվանա Խաչատրյանը նկատել է և բարձրաձայնել, ինչպես 3 տղամարդ իրենց անձնագրերում թղթի վրա գրառված այլ անձանց տվյալներով ստացել են քվեաթերթերթիկներ և քվեարկել: Հանձնաժողովի նախագահը ոչ մի կերպ չի խոչընդոտել: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դեպքի վերաբերյալ գրառում կատարել գրանցամատյանում:

Միևնույն ժամանակ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրաքվեի գրեթե բոլոր տեղամասերում արձանագրվել են հատկապես «Քաղաքացի Դիտորդ» նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների խախտումներ, որոնք դրսևորվել են վերջիններիս նկատմամբ սպառնալիքներով, քվեարկության նկատմամբ նրանց լիազորությունների սահմանափակումներով, գործընթացից մեկուսացմամբ, տեղամասերից հեռացմամբ և/կամ ոստիկանության բաժիններ բերման ենթարկելով կամ, ինչպես ոստիկանությունն է կոչում «հրավիրելով», և որ այդ ամենի արդյունքում հանրային հսկիչները և հետևաբար ողջ հանրությունը զրկվել է հանրաքվեի նկատմամբ իրական և արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունից և իրավունքից, ներկայացնում ենք դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների մի շարք խախտումները, քանի որ դրանց ազդեցությունը հանրաքվեի արդյունքների վրա ևս պետք է գնահատվի հանրաքվեի արդյունքների ամփոփման շրջանակներում՝ ելնելով այդ խախտումների համակարգային, զանգվածային և փոխկապակցված բնույթից:

Այսպես.

Թիվ 1 ընտրատարածք

Թիվ 1/22 հանրաքվեի տեղամասում ընտրողների ցուցակները տեղամասային հանձնաժողովի անդամների կողմից ժամը 19.50-ի սահմաններում վերցվել են ցուցակների վարման համար նախատեսված սեղաններից և դուրս բերվել քվեարկության սենյակից:

1/36 տեղամասում անհայտ անձինք, ինչպես նաև հանձնաժողովի անդամները խոչընդոտել են աշխատանքներս, չեն թողել տեսանկարահանում իրականացնել, սպառնացել են՝ ասելով, որ չես վախում որ նկարում ես, վատ ա լինելու: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դեպքի վերաբերյալ գրառում կատարել գրանցամատյանում:

Թիվ 3 ընտրատարածք

3/5 տեղամաս են այցելել 4-5 քվեարկող՝ փորձելով վիճաբանել դիտորդի հետ: Բնակիչները վիճաբանելով ասել են, որ դուք չեք կարող տեսանկարահանել մեզ: Դիտորդը տեսանկարահանում չի իրականացրել: Բնակիչները խոչընդոտել են դիտորդի աշխատանքը, որոշ ժամանակ անց հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրել բնակիչներին:

Թիվ 3/20 տեղամասում չեն թույլատրել դիտարկել ընտրացուցակները: Աշխատանքները խոչընդոտելու վերաբերյալ դիտարկում է ներկայացվել հանձնաժողովի նախագահին առ այն, որ գրանցում կատարվի խոչընդոտման դեպքի առթիվ:

Թիվ 3/29 տեղամասում արգելել են կատարել նկարահանումներ և ազատ տեղաշարժվել տեղամասում: Խոչընդոտող գործողությունների վերաբերյալ առաջարկությունները մերժվել են ընտրատարածքի նախագահի կողմից և դրանց վերաբերյալ գրառում չի կատարվել գրանցամատյանում:

Թիվ 4 ընտրատարածք

Ռոմիկ Դանիալը 06.12.2015թ. գտնվել է 4/01 տեղամասում որպես դիտորդ: Նրա որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով. նրա և ԶԼՄ ներկայացուցչի հետ անընդհատ բանավեճերի մեջ է մտել և նրանց հասցեին **հայհոյանքներ տվել** 4/01 տեղամասի հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Ազոյանը՝ խոչընդոտելով նրանց լիազորությունների իրականացմանը:

Ռոմիկ Դանիալը 06.12.2015թ. գտնվել է 4/01 տեղամասում որպես դիտորդ: Նրա, որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով. նրան և ԶԼՄ ներկայացուցիչ՝ Նազարի-Դեխնավի Հակոբին ծեծի են ենթարկել 4/01 տեղամասային հանձնաժողովի նախագահը, ՕԵԿ վստահված անձ՝ Մարզպետ Դալլաքյանը, ՀՀԿ վստահված անձ՝ Վարդան Հակոբյանը, մի խումբ անհայտ անձանց հետ: Նրա ձեռքից վերցրել են տեսագրող սարքը:

Թիվ 4/01 տեղամասում հաանձնաժողովի նախագահը խոչընդոտել է լրագրողի և «Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ Ռոմիկ Դանիալի լիազորությունների իրականացմանը, մասնավորապես՝ բազմիցս պահանջել է անջատել տեսանկարահանող սարքը: Նույն հանձնաժողովի նախագահը ապտակել է վերջինիս: Հանձնաժողովի նախագահ Ազոյանը, ինչպես նաև հանձնաժողովի անդամներ `Գևորգյան Նորայրը, Հովհանիսյան Եզորը և ՀԱԿ-ի ու ՕԵԿ-ի վստահված անձինք իրեն և Ռոմիկ Դանիալին տապալել են գետնին: Վերջիններս Ռոմիկ Դանիալի ձեռքից խլել են տեսանկարահանող սանքը և չեն վերադարձրել: Այնուհետև, ոստիկանները (մոտ 6-7 հոգի) բերման են ենթարկել Նազարի-Դեխնավի Հակոբին՝ հեռացնելով վերջինիս տեղամասից և խոչընդոտելով նրա լիազորությունների իրականացմանը:

Արմեն Եղոյանը 06.12.2015թ. գտնվել եմ թիվ 4/02 տեղամասում որպես ԶԼՄ ներկայացուցիչ: Նրա որպես ԶԼՄ ներկայացուցչի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով՝ 4/02 տեղամասի հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Եփրեմյանը հրաժարվել է արձանագրել տեղամասում միաժամանակ երկու ՀՀԿ-ի վստահված անձերի պարբերական ներկայության վերաբերյալ նրա կողմից ժամը 18:30-ի սահմաններում ներկայացված դիտարկումը:

Գոհար Աբրահամյանը 06.12.2015թ. գտնվել է Թիվ 4/05 տեղամասում որպես դիտորդ: Նրա որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով՝ ժամը 14:00-ի սահմաններում 4/05 տեղամասի հանձնաժողովի նախագահ Սերգեյ Ավագյանը սպառնալիքներով վերցրել է նրա քվեարկության գործընթացի տեսագրություններով հեռախոսը, ջնջել պարունակությունը և նոր վերադարձրել: Հանձնաժողովի նախագահը թույլ չի տվել ոչ նրան, ոչ մյուս դիտորդ Անահիտ Ամալյանին դիտարկել ցուցակը, առհասարակ մոտենալ սեղաններին: Այս դեպքերը չեն գրանցվել գրանցամատյանում:

Գոհար Հակոբյանը 06.12.2015թ. գտնվել է թիվ 4/26 տեղամասում որպես դիտորդ: Նրա որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով. 4/26 տեղամասի հանձնաժողովի անդամը՝ Ազատյան Դավիթ Անդրանիկին, դրոշմակնիքով դուրս է եկել տեղամասից որոշ ժամանակով, ինչի վերաբերյալ դիտարկումը դիտորդը ներկայացրել է հանձնաժողովի նախագահին, սակայն վերջինս դիտարկումս չի գրանցել գրանցամատյանում և այդ դեպքի վերաբերյալ որևէ գործողություն չի կատարվել:

Գոհար Հակոբյանը, 06.12.2015թ. գտնվել է թիվ 4/26 տեղամասում որպես դտորդ: Նրա՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով. նա, որպես 4/26 տեղամասի դիտորդ, արձանագրել է 3 դեպք, երբ անձինք եկել են կրկնաքվեարկության և պահանջել դիտարկումս գրանցել գրանցամատյանում, սակայն միայն վերջինն է արձանագրել հանձնաժողովի նախագահը, վստահված անձ՝ Թուղմաչյան Վահրամի և իր պահանջով: Վերջին դեպքի ժամանակ նախագահը դուրս է եկել տեղամասից գրանցամատյանը ձեռքում:

Հայկ Սարգսյանը 06.12.2015թ. գտնվել է թիվ 4/28 տեղամասում որպես ԶԼՄ ներկայացուցիչ: Նրա, որպես ԶԼՄ ներկայացուցչի, իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով՝ սկզբնական հաշվարկի ժամանակ հաշվարկվել է 484 «ոչ», 350 «այո» և 52 «անվավեր» քվեաթերթիկ, որոնք վերահաշվարկվել են՝ ինչի արդյունքում համամասնությունը փոխվել է հետևյալ կերպ՝ շուրջ 720 «այո» և 150 «ոչ»: Այս հանգամանքները հանձնաժողովի նախագահից պահանջել են արձանագրել գրանցամատյանում ներկայացուցիչը և ՀԱԿ-ի վստահված անձ Անահիտ Ավանեսյանը, ինչպես նաև ՀԱԿ հանձնաժողովի անդամ՝ Իռեյնանը, սակայն նրանց դիտարկումները հանձնաժողովի նախագահը հրաժարվել է արձանագրել:

Թիվ 5 ընտրատարածք

Թիվ 5 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում 08.12.2015թ. իրականացված վերահաշվարկի ընթացքում նրա դիտարկման համար հասանելի չեն եղել/դարձվել քվեարկողների ստորագրած ցուցակները, նրան չեն թույլատրել անարգել ծանոթանալ և ինքնուրույն քաղվածքներ կատարել: Հանձնաժողովի նախագահը ոչ միայն չի

արձանագրել խախտումը այլ նաև ինքն է անձամբ արգելել քվեարկողների ստորագրած ցուցակներին ծանոթանալ:

Բացի այդ Բաբկեն Տեր-Գրիգորյանի հաղորդմամբ Թիվ 5 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում 08.12.2015թ. իրականացված վերահաշվարկին ներկա են գտնվել նաև «Ժառանգություն» կուսակցության վստահված անձիք՝ Սանասարյան Դավիթը, Տաթևիկ Վարդանյանը և նույն կուսակցության կողմից նշանակված հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի անդամ Հրայր Մանուկյանը, ինչպես նաև «Ազատություն» զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ լրագրողներ, որոնց ևս չի թույլատրվել ծանոթանալ և դիտարկել քվեարկողների ստորագրած ցուցակները:

Ես՝ Վարդան Համբարձումյանս, 06.12.2015թ. գտնվել եմ թիվ 5/15 տեղամասում որպես դիտորդ: Իմ՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով. 5/15 տեղամասում հանձնաժողովի նախագահը հրաժարվել է ինձ տրամադրել գրանցամատյանի պատճենը կամ քաղվածքը:

Ես՝ Վարդան Համբարձումյանս, 06.12.2015թ. գտնվել եմ թիվ 5/16 տեղամասում որպես դիտորդ: Իմ՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով. իմ՝ 5/16 տեղամասում Դաշնակցություն կուսակցության վստահված անձ՝ Սուրեն Կարապետյանը խոչընդոտել է իմ լիազորությունների իրականացմանը: Մասնավորապես՝վերջինս, լինելով ալկոհոլային խմածության վիճակում, հանձնաժողովի մնացած անդամների հետ խոչընդոտել է իմ կողմից ցուցակի դիտարկմանը, մասնավորապես՝ վերջիններս նույնիսկ չեն թողել ինձ մոտենալ ընտրողների ցուցակին՝ զրկելով դրա դիտարկման հնարավորությունից:

Ես՝ Վարդան Համբարձումյանս, 06.12.2015թ. գտնվել եմ թիվ 5/16 տեղամասում որպես դիտորդ: Իմ՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով. 5/16 տեղամասի տեղամասի նախագահը հրել է ինձ, իսկ ՀՀԿ վստահված անձը սպառնացել է ինձ ոստիկանի ներկայությամբ և ոստիկաններին ցուցում է տվել, որպեսզի դուրս հանեն ինձ տեղամասից, ինչն էլ նրանք արել են: Թիվ 5 ընտրատարածքային հանձնաժողովի նախագահը, որը գտնվել է տեղամասում, հարվածել է իմ գլխին: Այս դեպքերը չեն արձանագրվել գրանցամատյանում:

Թիվ 6 ընտրատարածք

Ես՝ Էդուարդ Գյոզալյանս, 06.12.2015թ. գտնվել եմ թիվ 6/06 տեղամասում որպես ԶԼՄ ներկայացուցիչ: Իմ՝ որպես ԶԼՄ ներկայացուցչի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով՝ ինչ-որ անհայտ անձ առանց որևէ վկայականի և/կամ տարբերանշանի ամբողջ քվեարկության ընթացքում գտնվել է 6/06 տեղամասում առանց գրանցման: Նույն անձը ներկա էր նաև արդյունքների ամփոփման ժամանակ: Տեսնելով, որ ես նկարահանում եմ հեռախոսով՝ ասել է «կջարդեմ

հեռախոսդ»: Նշեմ, որ տեղամասի հանձնաժողովի անդամները ճանաչում էին այդ անձին, քանի որ անընդհատյա շփման մեջ էին նրա հետ:

Թիվ 7 ընտրատարածք

Ընտրատեղամասում եղել են անհայտ անձիք, ներկայացել են դիտորդ առանց հավաստող փաստաթղթի, որի մասին տեղյակ է եղել նաև հանձնաժողովի նախագահը և որևէ միջոց չի ձեռնարկել խախտումը վերացնելու համար:

Արդեն իսկ քվերկած անձը փորձել է կատարել կկրկնակի քվեարկություն, որը կանխվել է հանձնաժողովի նախագահի կողմից:
Տեղամասումեղել է Ոստիկանության համար առանձնացված սենյակ, որից դեպի ընտրատեղամաս ազատ ելումուտ են արել ոստիկանները:
Ընտրատեղամասի շրջակայքում եղել են բավականին մեծ թվով մարդկանց և մեքենաների կուտակումներ, որի վերաբերյալ լրագրողի զգուշացումները թողնվել են անհետևանք, անհետևանք է թողնվել նաև լրագրողի պահանջը՝ վերը նշված խախտումների վերաբերյալ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ:

Թիվ 8 ընտրատարածք

Քվետուփը տեղադրված է եղել մուտքի դռան մոտ,
հանձնաժողովի նախագահը պարբերաբար հայտնվել է քվեախցիկի հետնամասում, ինչով խաթարել է քվերակության գաղտնիությունը, ուղղորդել է քվերակողներին,
ավելին վերջինս չի կրել անվանաքարտ, ինչով հնարավոր կլիներ հավաստել նրա պաշտոնը և ինքնությունը:
Հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է դիտորդի և լրագրողի տեղամասում ազատ տեղաշարժման իրավունքը, հնչեցրել է վիրավորական արտահայտություններ դիտորդի և լրագրողի հասցեին այն բանից հետո, երբ նրանք առաջարկել են վերացնել խախտումները:
Այդ տեղամասում կահավորումը չի համապատասխանել օրենքով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ քվեախցիկների հետևում եղել են դռներ, որտեղից եղել է ելումուտ:
Կատարված առաջարկները՝ թերությունները վերացնելու և դրանք գրանցելու մասին թողնվել են անհետևանք:

Թիվ 9 ընտրատարածք

Թիվ 9/1 տեղամասում հանձնաժողովի նախագահը /ժամը 09:27:21/ խոչընդոտել է ներկայացուցչի աշխատանքներին, մասնավորապես արգելել է դիտարկել ընտրողների ցուցակները, ինչպես նաև այդ խախտումը չի արձանագրվել գրանցամատյանում:

Դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են թիվ 9/16 տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով (անգործությամբ) կամ որոշումներով.

Թիվ 9/16 տեղամասում հանձնաժողովի նախագահը /ժամը 12:08:41/ խոչընդոտել է դիտորդի աշխատանքներին: Մասնավորապես՝ դիտորդը ժամը 12:08-ի սահմաններում նկատել է կուտակումներ տեղամասում, որի մասին դիտարկում է ներկայացրել հանձնաժողովի նախագահին՝առաջարկելով վերացնել կուտակումները և գրանցել գրանցամատյանում, չկարողանալու դեպքում հայտնել ոստիկանությանը, սակայն հանձնաժողովի նախագահը մերժում է գրանցում կատարելը՝ պատասխանելով, եթե 2 ժամվա ընթացքում չվերանա չգրանցի, առկա են նաև համապատասխան տեսաձայնագրություններ:

Թիվ 9/27 տեղամասում հանձնաժողովի նախագահը խախտել է դիտորդի իրավունքները: Մասնավորապես՝անհետևանք է թողել հանձնաժողովի գրանցամատյանում խախտումների վերաբերյալ դիտորդիդիտարկումներնարձանագրելու վերաբերյալ նրա առաջարկությունները, անհետևանք է թողել նաև ՀՀԿ-ի վստահված անձի գործադրած հոգեբանական ճնշումները դիտորդի նկատմամբ և դրանք ևս չի արձանագրել համապատասխան գրանցամատյանում:Հանձնաժողովի անգործության պատճառով դիտորդն ու իր հետ նույն ընտրատեղամասում գտնվող asparez.am լրատվամիջոցի ներկայացուցիչը լքել են տեղամասը:

Թիվ 9/27 տեղամասում հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է ԶԼՄ ներկայացուցչի աշխատանքներին: Մասնավորապես՝ չի արձանագրել նրա դիտարկումները խախտումների վերաբերյալ, ՀՀԿ-ի վստահված անձի հետապնդումները և հոգեբանական ճնշումները թողել է անհետևանք, առանց արձանագրելու այդ խախտումները հանձնաժողովի գրանցամատյանում: Հանձնաժողովի անգործության պատճառով ներկայացուցիչը ստիպված լքել էտեղամասը:

Թիվ 9/27 տեղամասում հանձնաժողովի նախագահը խախտել է դիտորդի իրավունքները: Մասնավորապես՝ անհետևանք է թողելհանձնաժողովի գրանցամատյանում խախտումների վերաբերյալ դիտորդի դիտարկումներնարձանագրելու վերաբերյալ նրա առաջարկությունները, անհետևանք է թողել նաև ՀՀԿ-ի վստահված անձի գործադրած հոգեբանական ճնշումները դիտորդի նկատմամբ և դրանք ևս չի արձանագրել համապատասխան գրանցամատյանում:Հանձնաժողովի անգործության պատճառով դիտորդն ու իր հետ նույն ընտրատեղամասում գտնվող asparez.am լրատվամիջոցի ներկայացուցիչը լքել են տեղամասը:

Թիվ 9/27 տեղամասում հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է ԶԼՄ ներկայացուցչի աշխատանքներին: Մասնավորապես՝ չի արձանագրել նրա դիտարկումները խախտումների վերաբերյալ, ՀՀԿ-ի վստահված անձի հետապնդումները և հոգեբանական ճնշումները թողել է անհետևանք, առանց արձանագրելու այդ խախտումները հանձնաժողովի գրանցամատյանում:Հանձնաժողովի անգործության պատճառով ներկայացուցիչը ստիպված լքել է տեղամասը:

Թիվ 10/17 տեղամասում հանձաժողովի նախագահի կողմից խաչընդոտվել է ընտրատեղամասում նրա՝ քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելու և քվեարկությունը դիտարկելու իրավունքը, որն արձանագրվել է նաև համապատասխան տեսաձայնագրմամբ։

Թիվ 10/17 տեղամասում հանձաժողովի նախագահի կողմից խաչընդոտվել է ընտրատեղամասում լրատվամիձոի ներկայացուցչի՝ քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելու և քվեարկությունը դիտարկելու իրավունքը, որն արձանագրվել է նաև համապատասխան տեսաձայնագրմամբ։

Թիվ 10/17 տեղամասում հանձաժողովի նախագահի կողմից խաչընդոտվել է ընտրատեղամասում իմ՝ քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելու և քվեարկությունը դիտարկելու իրավունքը, որն արձանագրվել է նաև համապատասխան տեսաձայնագրմամբ։

Թիվ 12 ընտրատարածք

Թիվ 12/21 տեղամասում սահմանափակվել են դիտորդների իրավունքները։ Նրանց չի թույլատրվել դիտարկել ընտրողների ցուցակներում հանձնաժողովի անդամների կողմի կատարվող գրառումները։ Պահանջում է հեռու կանգնել աշխատանքային սեղաններից և ընտրողների ցուցակներից կամ հեռանալ տեղամասից։ Հանձնաժողովի նախագահը, տեղյակ լինելով այդ խախտումների մասին, որևէ միջոց չի ձեռնարկել դրանք արձանագրելու և վերացնելու ուղղությամբ։

Թիվ 12/11 տեղամասային հանձնաժողովի նախագահը Միհրան Հայրապետյանը սպառնացել է դիտորդ Արման Սահակյանին, որ նախկինում կատարված տեսաձայնագրությունները ձեռքից զոռով վերցնելու են։

Թիվ 12/11 տեղամասայում ԶԼՄ-ի ներկայացուցիչներին չեն թողել մոտենալ ընտրացուցակներին։Նրանց իրավունքների խախտումների մասին տեղեկացված է եղել Հանձնաժողովի նախագահը, որը որևէ միջոց չի ձեռնարկել խախտումն արձանագրելու և վերացնելու խախտումը։

Թիվ 12/16 տեղամասում լրատվամիջոցի ներկայացուցիչը չի կարողացել մոտենալ ընտրացուցակներին և հետևել լրացման ընթացքին։ Խոչընդոտները առաջացրել է հանձնաժողովի նախագահը։ Փաստը չի արձանագրվել և խախտումը չի վերացվել։ Խախտվել է դիտորդի իրավունքը սահմանված «Ընտրական օրենսգրքի» 31 հոդվածով։

Թիվ 12/27 տեղամասում դիտորդին թույլ չէին տալիս մոտենալ ցուցակներին։ Հանձնաժողովի նախագահը, տեղեկացված լինելով այդ իրավունքի խախտման մասին, որևէ քայլ չի ձեռնարկում այն արձանագրելու և վերացնելու ուղղությամբ։

Թիվ 14 ընտրատարածք

Թիվ 14/21 տեղամասային հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է լրագրողի աշխատանքը՝ արգելելով անարգել դիտարկել քվեարկողների ցուցակները, սեփական թղթերի վրա կատարել սեփական նշումները:

Թիվ 14/23 հանրաքվեի տեղամասում խոչընդոտվել են Անուշ Թովմասյանի և Հովհաննես Պապյանի՝ որպես զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների իրավունքները: Մասնավորապես, Աշտարակ քաղաքի փոխքաղաղապետ Գևորգ Եղիազարյանը, չունենալով տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք, մուտք է գործել տեղամասային կենտրոն և արգելել է Պապյան Հովհաննեսին ծանոթանալ ընտրողների ցուցակներին և նշումներ կատարել իր մոտ: Գ. Եղիազարյանը փորձել է մոլորության մեջ դնել նաև լրագրող Ա. Թովմասյանին՝ հայտնելով, որ օրենքը թույլ չի տալիս ընտրողների ցուցակներից գրառումներ կատարել: Այնուհետև, լրագրողներին ընտրողների ցուցակներից սեփական թղթերի վրա սեփական նշումներ կատարելու արգելքը ներկայացվել է նաև հանձնաժողովի անդամների կողմից: Վերոգրյալ խախտումների վերաբերյալ տեղեկացվել է տեղամասային հանձնաժողովի նախագահը, որը միջոցներ չի ձեռնարկել խախտումն արձանագրելու և վերացնելու ուղղությամբ:

Թիվ 19 ընտրատարածք

Թիվ 19/07 տեղամասի հանձնաժողովի անդամը խոչընդոտել է զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին՝ անարգել դիտարկելու քվեարկողների ցուցակները, արգելել է սեփական թղթերի վրա կատարել սեփական նշումները:

Թիվ 19/8 տեղամասի ընտրացուցակները ամբողջությամբ հասանելի չեն եղել դիտարկման համար՝ ընտրողների ցուցակներին անարգել ծանոթանալու հնարավորությունը սահմանափակված է եղել, քանի որ դրանք կարված էին այնպես, որ հնարավոր չէր դիտարկել քվեարկողների հերթական ցուցակներում քվեարկողների հերթական համարները:

Թիվ 20 ընտրատարածք

Թիվ 20/3 տեղամասում քվեախցիկի հետնամասում գտնվում էր դուռ, ինչը ընտրատեղամասի կահավորման խախտում է: Վերոգրյալ խախտման վերաբերյալ տեղեկացվել է տեղամասային հանձնաժողովի նախագահը, որը միջոցներ է ձեռնարկել խախտումն վերացնելու (դուռը մեխվել է) ուղղությամբ, սակայն նա հրաժարվել է արձանագրել խախտումը: Ինչպես նաև օրվա ընթացքում պարբերաբար դիտորդին թույլ չի տրվել կատարել անարգել ծանոթանալ ընտրողների ցուցակներին և կատարել սեփական նշումները սեփական թղթերի վրա:

Թիվ 21 ընտրատարածք

Թիվ 21/09 տեղամասի հանձնաժողովի անդամը փորձել է խոչընդոտել դիտորդին ընտրողների ցուցակներից սեփական թերթերի վրա կատարել սեփական նշումներ:

Թիվ 21/12 տեղամասում Լ. Հայրապետյանն արձանագրել է երկու անձով քվեախուց մտնելու և քվեարկելու դեպք, դիմել է հանձնաժողովի նախագահին խախտումն արձանագրելու և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ, սակայն այդ ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել: Խախտումը չի արձանագրվել գրանցամատյանում:

Թիվ 21/12 տեղամասի հանձնաժողովի անդամը փորձել է խոչընդոտել դիտորդին կատարել ընտրողների ցուցակներից սեփական թերթերի վրա սեփական նշումներ:

Թիվ 21/18 տեղամասի հանձնաժողովի անդամը խոչընդոտել է դիտորդին անարգել ծանոթանալ ընտրողների ցուցակներին և ընտրողների ցուցակից սեփական թերթերի վրա սեփական նշումներ կատարել:

Թիվ 25 ընտրատարածք

Թիվ 25/1 տեղամասում տեղի է ունենում քարոզչություն տեղամասի տարածքում, իսկ տեղամասի ներսում առկա են կողմնակի անձինք, իմ պահանջը՝ գրանցել խախտումները, մերժվել են և հրաժարվել են խախտման վերաբերյալ համապատասխան գրառում կատարել գրանցամատյանում, իմ կողմից զգուշացվել է և առաջարկվել է կանխել խախտումը, սակայն մերժվել է: Արդյունքում խախտվել են իմ իրավունքները, նախատեսված ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի նորմերով:

Թիվ 25/2 տեղամասում կողմնակի վկայական չունեցող անձինք ներկա էին քվեարկության սենյակում և խոչընդոտում էին քվեարկության ընթացքը, հանձնաժողովի նախագահը հրաժարվում էր արձանագրել խախտումը և ես ստիպված դուրս եկա տեղամասից, չկարողանալով իրացնել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված իմ լիազորությունները:

Արդյունքում խախտվել են իմ իրավունքները, նախատեսված ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի նորմերով:

Թիվ 26 ընտրատարածք

Թիվ 26/9 տեղամասում 50 մետր շառավղով տեղի է ունեցել մարդկանց և մեքենաների կուտակումներ, առկա են լուսանկարներ, կազմվել է արձանագրություն, սակայն մերժել են գրանցել այն տեղամասի գրանցամատյանում: Արդյունքում խախտվել են իմ իրավունքները, նախատեսված ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի նորմերով:

Թիվ 29 ընտրատարածք

Թիվ 29/8 տեղամասում հայտնաբերվել են բազմաթիվ խախտումներ՝ այլ անձի փոխարեն քվեարկություն, կողմնակի անձանց ներկայություն ընտրատեղամասում, բազմաթիվ լցոնումներ, խոչընդոտվել է դիտորդի գործունեությունը, չի թույլատրվել կատարել նշումներ ընտրողների ցուցակներից:

Թիվ 29/11 տեղամասում ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ Տիգրան Պապանյանը այցելել է տեղամաս և դիտորդին սպառնացել է ձերբակալել, եթե վերջինս չդադարեցնի մասնակիցների ցուցակից գրառումների կատարումը: Տ. Պապանյանի հրահանգով հանձնաժողովի նախագահը թույլ չի տվել դիտորդին նշումներ (գրառումներ) կատարել մասնակիցների ցուցակից:

Թիվ 29/21 տեղամասում պարբերաբար կատարվել է բազմակի քվեարկություն տեղամասից դուրս. բազմաթիվ հաշմանդամություն ունեցող անձանց կամ առողջական խնդիրներ ունեցող անձանց համար քվեաթերթիկը հանձնաժողովի նախագահի և վստահված անձի կողմից տարվել է տեղամասից դուրս, այն լրացվել է մեքենայի մեջ կամ այլ տեղ, այնուհետև քվեաթերթիկը բերվել և գցվել է արկղի մեջ: Վերոգրյալի վերաբերյալ անհրաժեշտ գրանցումներ համապատասխան մատյաններում չեն կատարվել, Տեղամասային հանձնաժողովի նախագահը միջոցներ չի ձեռնարկել նշվածի ուղղությամբ: Նշված խախտումները լուսանկարահանվել են:

Թիվ 30 ընտրատարածք

Թիվ 30/05 տեղամասում Դաշնակցության կուսակցության վստահված անձը սպառնացել է դիտորդ Անի Մալոյանին, բղավել վերջինիս վրա, թույլ տվել վիրավորական արտահայտություններ:

Թիվ 30/27 տեղամասում ՀՀԿ-ի վստահված անձն ուղղորդում է քվեարկության եկած քաղաքացիներին և իր մոտ գտնվող տետրի մեջ կատարում է ներկայացած անձանց մասին նշումներ:

Թիվ 31 ընտրատարածք

Թիվ 31/59 տեղամասում կողմնակի անձը տնական ժամանակ միջամտել է հանձնաժողովի աշխատանքին: Հանձնաժողովի նախագահը նրան առաջարկել է հեռանալ, սակայն վերջինս չի ենթարկվել, և նշել է, որ ինքը գյուղապետարանի աշխատող է և ցանկանում է օգնել: Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում գրառում չի կատարել դեպքի վերաբերյալ:

Թիվ 32 ընտրատարածք

Թիվ 32/01 տեղամասում տեղի է ունեցել բաց քվեարկություն. քվեաթերթիկներն առանց ծրարի են գցվում արկղի մեջ: Հանձնաժողովի անդամներն անընդհատ փորձում են փակել դիտորդի տեսադաշտը՝ խոչընդոտելով ազատորեն դիտարկել քվեարկության ընթացքը: Քվեարկողների մի մասի անձնագրերում կնիքներ չեն դրվում:

Թիվ 33 ընտրատարաքծ

Թիվ 33/69 տեղամասում ժամը՝ 15:39-ի սահմաններում Հանձնաժողովի քարտուղարը փորձել է լցոնում կատարել, դիտորդը տեսել է, որից հետո քարտուղարը հեռացել է տեղամասից: Հանձնաժողովի նախագահը փորձել է բանակցել դիտորդի հետ՝ դեպքը թաքցնելու նպատակով պայմանավորվածություն ձեռք բերելու համար, սակայն դիտորդը այս առաջարկը մերժել է: Ավելին, դիտորդը տրամադրել է տեսանյութ հանձնաժողովի անդամների կողմից քվեաթերթիկները սեղանի տակից հանելու և առանց կնիքի գործողություններ իրականացնելու վերաբերյալ: Դիտորդի առաջարկները խախտումները վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ՝ մերժվել են:

Թիվ 33/75 տեղամասում ժամը 14:05-ի սահմաններում դիտորդին առաջարկվել է կաշառք՝ խախտումների վրա աչք փակելու պայմանով, որից առաջացել է վիճաբանություն ավելին, դիտորդն ականատես է եղել ընտրակաշառքի մի շարք դեպքերի:

Թիվ 33/77 տեղամասում կահավորումը չի համապատասխանել սահմանված պահանջներին, ավելին ժամը՝ 13:33-ի սահմաններում նկատվել է մարդկանց և մեքենաների կուտակումներ տեղամասից 50 մետր շառավղի խախտմամբ: Դիտորդի պահանջը ուղղված հանձնաժողովի նախագահին՝ խախտումները վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ մնացել է անհետևանք:

Թիվ 34 ընտրատարածք

Թիվ 34/7 տեղամասում ժամը՝ 09:18-ի սահմաններում հանձնաժողովի նախագահը արգելել է դիտորդին կատարել գրառումներ ընտրողների ցուցակից:

Թիվ 34/12 տեղամասում ժամը 07:34-ի սահմաններում պարզվել է, որ ընտրատեղամասը կահավորված չէ օրենքի պահանջների համապատասխան, մասնավորապես՝ սեղանները դրված են եղել ետնապատին կից: Դիտորդի առաջարկը՝ խախտումը վերացնելու, հանձնաժողովի նախագահի կողմից մերժվել է պատճառաբանությամբ, որ տարածքը փոքր

է: Արդյունքում, դիտորդը զրկվել է դիտորդական առաքելության արդյունավետ իրականացման համար քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելու իր իրավունքից, ավելին հանձնաժողովի նախագահը հրաժարվել է դիտորդի պահանջով խախտման կապակցությամբ գրանցամատյանում կատարել գրառում:

Թիվ 34/20 տեղամասում ժամը՝ 14:50-ի սահմաններում ՀՀ քաղաքացին քվեարկության ժամանակ պարզել է, որ իր եղբոր՝ Աշոտ Ռաֆիկի Կարապետյանի փոխարեն արդեն քվեարկված է այն դեպքում, երբ եղբայրը չի բնակվում Հայաստանի Հանրապետությունում: Վերջինիս պահանջը խախտումը վերացնելու բավարարվել է, իս դիտորդի պահանջը՝ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ մերժվել: Իսկ ժամը՝ 09:55-ի սահմաններում դիտորդի կողմից բարձրաձայնվել է ընտրախախտում՝քաղաքացի Աշոտ Կարապետյանի անվան դիմաց կատարված լրացման վերաբերյալ, արդյունքում որևէ միջոց չի ձեռնակվել նածագահի կողմից, այդ թվում գրանցամատյանում փաստի գրառումը:

Թիվ 34/23 տեղամասում ժամը՝ 10:48-ի սահմաններում մի խումբ անձինք, ովքեր ներկայացել են որպես Հանրապետական և Բարգավաճ Հայաստան կուսակցությունների վստահված անձինք խմբերով մարդկանց են տեղափոխել տեղամաս՝ պատճառաբանելով, որ նրանք ծեր են և դժվար է վերջիններիս համար առանց օգնության տեղամաս հասնելը: Դեպքի կապակցությամբ դիտորդի կողմից հանձնաժողովի նախագահին առաջարկվել է ձեռնարկել միջոցներ՝ կանխելու խախտումները և գրանցամատյանում կատարել համապատասխան գրառումներ, առաջարկները թողնվել են անհետևանք:

Թիվ 34/25 տեղամասում ժամը՝ 15:45-ի սահմաններում հանձնաժողովի նախագահը դիտորդին արգելել է ազատ տեղաշարժվել ընտրատեղամասում, իսկ մյուս դիտորդին հեռացրել է ընտրատեղամասից և հրաժարվել դեպքի կապակցությամբ գրառում կատարել գրանցամատյանում:

Թիվ 34/28 տեղամասում ժամը 20:46-ի սահմաններում տեղամասում անորոշ պատճառներով չէր սկսվել հաշվարկման գործընթացը: Ավելին, մինչ տեղամասը փակելը քվեատուփի մոտ գտնվող հանձնաժողովի անդամից անհայտ անձը վերցրել է կնիքը և հեռացել տեղամասից, որոշ ժամանակ անց կնիքը հայտնաբերվել է:
Խախտման վերաբերյալ դիտորդի առաջարկը՝ միջոցներ ձեռնարկելու և գրանցամատյանում գրառելու մասին հանձնաժողովի նախագահի կողմից մերժվել է:
Տեղամասում եղել է լցոնման մի քանի դեպք, որի վերաբերյալ առկա է տեսանյութ:
Բացի այդ, խախտվել է հանձնաժողովի անդամների՝ ըստ վիճակահանության 2-ժամյա պարբերականությամբ հերթափոխի պահպանման վերաբերյալ օրենքի պահանջը: Նախագահն անտեսել է դիտորդի պահանջը՝ գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ:

Թիվ 34/31 տեղամասում ժամը 14:24-ի սահմաններում թոռնուհին քվեարկել է տատիկի փոխարեն, խախտման վերաբերյալ դիտորդի առաջարկը՝ գրանցամատյանում գրառելու վերաբերյալ թողնվել է անհետևանք:

Ավելին, ժամը 12:19-ի սահմաններում առավոտյան քվեարկած անձը քվեարկել է երկրորդ անգամ և դիտորդի առաջարկը՝ խախտումը վերացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու վերաբերյալ հանձնաժողովի նախագահը ևս թողել է անհետևանք /առկա է տեսագրություն:

Թիվ 35 ընտրատարածք

Թիվ 35/29 տեղամասում ժամը 12:47-ի սահմաններում տեղամաս են եկել քաղաքացիներ, որոնք ներկայացել և գրանցվել են որպես Հանրապետական կուսակցության վստահված անձինք, սակայն չեն կրել վկայականներ: Նշված վստահված անձինք հիմնականում գտնվել են տեղամասից դուրս և պարբերաբար 3-5 հոգանոց խմբեր են ուղեկցել դեպի տեղամաս:
Դիտորդի բարձրաձայնումը խախտումների վերաբերյալ հանձնաժողովի նախագահի կողմից թողնվել է անհետևանք, ավելին, անտեսվել է նաև առաջարկը՝ գրանցամատյանում խախտումները գրառելու մասին:

Թիվ 35/37 տեղամասում ժամը՝ 16:45-ի սահմաններում անհայտ քաղաքացին ստորագրել է "Ցայգ" լրատվամիջոցի լրագրողի փոխարեն և դիտորդի առաջարկը՝ ուղղված հանձնաժողովի նախագահին խախտման վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու և գրանցամատյանում խախտումը գրառելու մասին թողնվել է անհետևանք:

Թիվ 2 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում Asparez.am լրատվական կայքի լրագրող Մուրադ Վարձելյանի իրավունքները խախտվել են հետևյալ կերպ.

Թիվ 2 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում 09.12.2015թ. իրականացված վերահաշվարկի ընթացքում նրա լիարժեք ծանոթացման իրավունքը սահմանափակված է եղել՝ նրա դիտարկման համար հասանելի չեն եղել/դարձվել քվեարկողների ստորագրած ցուցակներում քվեարկողների հերթական համարները, քանի որ այդ ցուցակներն այնպես էին կարված որ հնարավոր չի եղել դիտարկել ընտրողների հերթական համարները, դրանք չեն երևացել:
Հանձնաժողովների նախագահների կողմից որևէ միջոց այս ուղղությամբ չի ձեռնարկվել:

Թիվ 5 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում «Իրավունքի Եվրոպա Միավորում» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԻԵՄ), «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԹԻՀԿ) դիտորդ և «Ասպարեզ» օրաթերթի և Asparez.am լրատվական կայքի լրագրող Բաբկեն Տեր-Գրիգորյանի իրավունքները խախտվել են հետևյալ կերպ.

Թիվ 5 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում 08.12.2015թ. իրականացված վերահաշվարկի ընթացքում նրա դիտարկման համար հասանելի չեն եղել/դարձվել քվեարկողների ստորագրած ցուցակները, նրան չեն թույլատրել անարգել ծանոթանալ և ինքնուրույն քաղվածքներ կատարել: Հանձնաժողովի նախագահը ոչ միայն չի արձանագրել խախտումը այլ նաև ինքն է անձամբ արգելել քվեարկողների ստորագրած ցուցակներին ծանոթանալ:

Բացի այդ Բաբկեն Տեր-Գրիգորյանի հաղորդմամբ Թիվ 5 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում 08.12.2015թ. իրականացված վերահաշվարկին

ներկա են գտնվել նաև «Ժառանգություն» կուսակցության վստահված անձիք՝ Սանասարյան Դավիթը, Տաթևիկ Վարդանյանը և նույն կուսակցության կողմից նշանակված հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի անդամ Հրայր Մանուկյանը, ինչպես նաև «Ազատություն» զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ լրագրողներ, որոնց ևս չի թույլատրվել ցանոթանալ և դիտարկել քվեարկողների ստորագրած ցուցակները:

Թիվ 8 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում Asparez.am լրատվական կայքի լրագրող Ռուբինա Մարկոսյանի իրավունքները խախտվել են հետևյալ կերպ.

Թիվ 8 հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովում 10.12.2015թ. իրականացված վերահաշվարկի ընթացքում ընտրողների ցուցակներին Ռ. Մարկոսյանի լիարժեք ծանոթացման իրավունքը սահմանափակված է եղել. վերջինիս դիտարկման համար մատչելի չեն եղել/դարձվել քվեարկողների ստորագրած ցուցակներում քվեարկողների հերթական համարները, քանի որ հանձնաժողովի անդամները չեն թույլատրել համապատասխան ցուցակներից սեփական թղթերի վրա կատարել սեփական նշումները՝ պատճառաբանելով ժամանակի սղությամբ: Բացի այդ, քվեարկության արդյունքների վերահաշվարկի արդյունքում բացահայտվել է չօգտագործած քվեաթերթիկների թվի անհամապատասխանություն, սակայն հանձնաժողովի անդամները հրաժարվել են որևիցէ կերպ արձանագրել այդ փաստը:
Հանձնաժողովների նախագահների կողմից որևէ միջոց այս ուղղությամբ չի ձեռնարկվել

Հաշվի առնելով սույն դիմում/բողոքով ներկայացված խախտումների համակարգային և փոխկապակցված բնույթը և ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Ընտրական օրենսգրքի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի և Քրեական օրենսգրքի դրույթներով՝

Խնդրում ենք՝

1. հարուցել վարույթներ ըստ անհրաժեշտության նաև սեփական նախաձեռնությամբ և քննության առնել նշված խախտումների ազդեցությունը հանրաքվեի համապատասխան տեղամասերում և/կամ ընտրատարածքներում և/կամ հանրաքվեի համապետական արդյունքների վրա.
2. ձեռնարկել միջոցներ դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, ինչպես նաև քվեարկության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ օժտված սուբյեկտների, քվեարկության իրավունք ունեցողների և բոլոր մյուս մասնակիցների իրավունքների խախտման կապակցությամբ, վերոգրյալ խախտումները համապատասխան փաստաթղթերում արձանագրելու, արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված այլ միջոցների ձեռնարկման ուղղությամբ.
3. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

4. ըստ անհրաժեշտության քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության.

Կից ներկայացվում է՝

1. Դիմումատու/Բողոքաբեր Հասարակական կազմակերպությունների կողմից տրված լիազորագրեր

Դիմումատու/Բողոքաբեր
Հասարակական կազմակերպությունների լիազորված ներկայացուցիչներ

Տիգրան Եգորյան

Լուսինե Հակոբյան

Գենյա Պետրոսյան

Դավիթ Գյուրջյան,

Քրիստինա Գևորկյան

Վահե Գրիգորյան

11-ը դեկտեմբեր 2015թ.